

ՀԱՅԸ ԿԱ, ՀԱՅԸ ՀԻՇՈՒՄ Է ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԼԻԱ Է
ՀԱՁԱՐ ՏԱՐԻՆ ԱՐ ԱՆԳԱՄ

Ալիսիա ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հարցազրույց Աստծո հետ

Մի լռիր, Աստված,
դու չէիր կարող մեղսակից լինել
արհավիրքներին աշխարհի, հոգու.
Եվ մեզ չէ՛ս կարող,
չպիտի լքես,-
Աստված ես եթե...

Ես ծնվել եմ, Տեր,
մի հայ արգանդից,
և, հետևաբար, դեռ աշխարհ
չեկա՞ծ,
ծանոթ եմ բոլոր
արհավիրքներին ու նախճիրներին,
հատկապես նրան,
որին թույլ տվիր, որ... եղեռնանա,
ո՞վ գիտե, թե ի՞նչ
գերմարդկային ու գաղտնի օրերնքի
խորհուրդով խորին...

Եվ հարց եմ տալիս,
ի խորոց իմ այս հարցազրույցի,

և խոցված սրտի.-
Որտե՞ղ էիր դու,
տիեզերական թո՛ղմամբության
ո՞ր համգրվանում,
և այն ժամանակ ի՞նչ էիր անում,
երբ... ջարդում էին հայերին

այստեղ...Որտե՞ղ էիր, Տեր,
տիեզերական,
ո՞ր անջրպետի, ո՞ր ոլորտներում,
երբ ամբողջ մի ազգ,
իր անգործության ոտնահետքերն էր
դաջում եղեռնի անապատներում...

Որտե՞ղ էիր դու, Ամենակարող,
Երբ թո՛ղմամբ ստվերը անգամ
հերիք էր, որ դու
նախահայրերիդ ասված մի բառով,
կամ մի նշանով,
կանխեիր ո՞՞րն այդ հրեշային:



Քո դուռն եմք այսօր
Տեր, բախում կրկին
և... պարտադրում,
որ դու, թո՛ղմամբ Արարումներով
ներմուծես նաև Արդար Դատը մեր,
մեր երա՛զսն անմեռ...
Անսա՛կոչն այս, Տեր,
քանզի այս խաչված ցեղն,
անտարակույս,
ունի մի վսե՛մ Առաքելություն-
ի շահ Մարդկության ու
խաղաղության.-
որի Գալուստն ու Կատարումը, Տեր,
թո՛ղմամբ չնչի՛ց...

Առ մեր ուսերից
այս բեռը ցավի,
մոռացնե՛լ տուր մեզ
քարավանները սովի ու մահվան
դաջված քարտեզին ու մեր...
ուղեղում...


Սպիտակ է թո՛ղմամբ պատմությանը, Տեր,
ծածկիր նրանով ժողովուրդը թո՛ղմամբ,
որ արտասուքը
իր ճանապարհը գեթ մի օր չեղի,
և վիշտն էլ երբեք
իր կմիջը մեր սրտին չդնի...

Պաշտպանի՛ր Դատը
մեր սուրբ ու արդար,
որ թո՛ղմամբ է նաև-
ինչպես Մեծ Վի՛շտը Տիեզերական...

Ամե՛ն, ամե՛ն եմ ասում քեզ, Հորդ,
գի՛ գուցե այդպես,
այդ ձևով միայն,
այս Հողագնդի չնչի՛ն մի մասում,
որտեղ իջել է Միածինը թո՛ղմամբ,
Արդարությունը ինքն իրեն գտնի,
վերստին ծնվի և կամ
նորոգվի...

Մենք պատմության դառն փորձ ունենք. երբ աշխարհի «գլուխը խառն է», միջնադարից մեզ հետապնդող ու մեր հայրենիքը ծվատելու հարմար առիթ որոնող թշնամին անցնում է գործի՝ հերթական կտորը պոկելու և յուրացնելու: Այսօր էլ, երբ ընթանում է ռուս-ուկրաինական պատերազմը, որը, չնայած որոշ հերթումների, համաշխարհային է, մեր անբարյացակամ հարևանները կրկին փորձում են ինչ-որ բան պոկել մեզանից, և կրկին-կրկին Արևմուտքի դրոշմամբ, որ անձայրածիր Ռուսաստանին ուղիղ հարվածելու փոխարեն՝ դարձյալ հարմար է գտնում մեր պարանոցն ու թուրքական յաթաղանը: Նրանք ռուսներին թուլացնելու համար փորձում են հարվածել Հարավային Կովկասում նրանց ամենակուռ հենարանին, այսինքն՝ մենք տուժում ենք երկու պատճառով և երկու ձևաչափով: Առաջինն այն է, որ թուրքերն ուղղակի մեր կենսաբանական թշնամիներն են: Երկրորդն այն է, որ թուրքերը մեր բարեկամի (և դեռ հարց է մնում այս բարեկամության բուն բովանդակությունը) թշնամիների բարեկամներն են: Այսինքն՝ վերջին օրերին սահմանում տեղի ունեցածի համատեքստում թշնամական թուրքիային ու նրա լակոտին՝ Ադրբեջանին, պետք է դիտարկել ոչ միայն որպես ահաբեկիչ-զավթիչներ, այլև միջազգային վարձկաններ, որոնք, բացի սեփական աղտոտ իղծերից, նաև երրորդ կողմի պատվերով են գործում մեր դեմ:

Այս համատեքստում ստորև մեջբերում եմ մեծանուն Ավետիք Իսահակյանի նամակներից մի քանի հատված, որոնք, գրված լինելով ավելի քան մեկ դար առաջ, այսօրվա դեպքերի պատճառները մատնանշում են ավելի պարզ ու հասկանալի:



ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԿԽՈՍԻ

1920 թվականի մարտի 14-ին բանասեր Սիմոն Հակոբյանին ուղղված նամակում Իսահակյանը գրում է. «Ուրեմն՝ նորից Ձանգեզուրի շուրջ պատերազմ: Անգլիան ուզում է անպայման ունենալ Ջուղայի բերանը: Հնար չկա, կորած է թե՛ Ղարաբաղը, թե՛ Ձանգեզուրը և

թե՛ Նախիջևանը:

...Դուք հավատո՞ւմ եք Թուրքահայաստանի ազատությանը, ես դրան չեմ հավատում, հրաշք պիտի լինի, եթե ազատվի: Իտալիան անվերջ զինում է Մուստաֆա Քեմալին, Ֆրանսիան գիտենք ինչ է... Անգլիան էլ մյուս կողմից Ադրբեջանին է զինում, խաբում են մեզ: Բոլշևիկներից էլ հույս չկա, նրանք էլ պանթուրքիստ են դարձել, շատ մռայլ են տեսնում գործերը...» («Նամակների», կազմեց՝ Արփիկ Ավետիսյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 90):

Մեկ այլ տեղում. «...Մեզ մնում է ռուսը... վերջիվերջո ռուս և թուրք բախվելու են իրար, Անատոլիան գրավվելու է ռուսների կողմից ու չկա կանոխ... Ֆրանկո-անգլիական նպատակն է մուսուլմաններին կանգնեցնել ռուսների դեմ, ինչպես և ռուսների նպատակն է, բայց երբեք մեզ թուրքը Եվրոպային համակիր է... Անգլիան և Ֆրանսիան հնարքներ են մտածում թուրքին հասցնել մինչև Բագու: Ռուսը նրանց համար հազար անգամ վտանգավոր է, քան իսլամը ... Տեսնո՞ւմ ես, թե ի՞նչ է խորհում Եվրոպան. թուրքերով պատմե՛ք ստեղծել ռուսի դեմ: Եվ եթե մեր ղեկավարները հասկանային այս՝ Ղարա՛սը կորցրած չէին լինի և 6000 հայ հողի տակ դրած...»:

Իսկ Հ. Օհանջանյանին էլ մի առիթով գրում է. «Ձեզ մատաղ, ամեն բան արեք Ղարաբաղը, Լոռին չկորցնեք: Սեբաստիա, Կեսարիա հայերիս սրտին բան չեն ասի, իսկ Ղարաբաղ, Սյունիք, Դավիթ Բեկ... Անկարելի է, և, վերջապես, Ղարաբաղում չի կարելի ընկճել: Մելիքներն որդիները նորեն ռուսներին կբերեն, թուրքերը չեն կարող նրանց տեր լինել... Երբեք» (նույն գրքում, էջ 78):

Գևորգ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Լրացավ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Աշոտ Մեթրքի Սադյանի 65 տարին:

Աշոտ Մեթրքի Սադյանը ծնվել է 1957 թ. ապրիլի 7-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1973 թ. ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ, որը ավարտել է 1978 թ. գերազանցությամբ՝ ստանալով քիմիկոսի որակավորում: Նույն թվականից որպես ավագ լաբորանտ սկսել է աշխատել ԽՍՀՄ մանրէաբանական և բժշկական արդյունաբերության նախարարության գենետիկայի համամիութենական գիտատիտուտի Չարենցավանի մասնաճյուղում:

Աշխատանքային գործունեության հենց սկզբից Ա. Սադյանը իրեն դրսևորում է որպես գիտահետազոտական աշխատանքի նկատմամբ արտահայտված հակում ունեցող անձնավորություն, և ինստիտուտի ղեկավարությունը նրան գործուղում է գենետիկայի համամիութենական գիտատիտուտ (ք. Մոսկվա)՝ որպես հայցորդ-հետազոտող: 1980 թ. Ա. Սադյանը ընդունվում է գենետիկայի համամիութենական գիտատիտուտի նպատակային ասպիրանտու-



ԸԸ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը 65 տարեկան է

րա, իսկ մեկ տարի անց տեղափոխվում է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյանովի անվան էլեմենտորական միացությունների ինստիտուտ, որտեղ աշխատում է կենսատեխնոլոգիայի կարևորագույն բնագավառի՝ կենսամիմետիկ սինթեզի առաջատար լաբորատորիաներից մեկում: 1985 թ. հանրահայտ գիտնական, պրոֆեսոր Յու. Բելոկոնի ղեկավարությամբ Ա. Սադյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված պիրիդոքսալային կատալիզի օրինաչափությունների հետազոտմանը և ամինաթթուների ասիմետրիկ բիրմիմետիկ սինթեզի նորագույն տեխնոլոգիաների ստեղծման տեսական և կիրառական հարցերին:

Վերադառնալով մայր ինստիտուտ՝ Ա. Սադյանը կազմավորում է ոչ սպիտակուցային ամինաթթուների սինթեզի լաբորատորիա և ծեռնամուխ է լինում Հայաստանի համար բոլորովին նոր՝ ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի գիտական ուղղության զարգացմանը: Գործունեության տարիների ընթացքում իրականացրած նորարարական մի շարք աշխատանքների շնորհիվ Ա. Սադյանի ղեկավարած գիտական խումբը այսօր ստացել է միջազգային ճանաչում: Դրա փայլուն ապացույցն են բազմաթիվ միջազգային գիտաժողովներից ստացված հրավերները, հեղինակավոր գիտական հանդեսներում տպագրված հոդվածները և չափած միջազգային դրամաշնորհները: Ա. Սադյանը բազմիցս գիտական զեկուցումներով համդես է եկել միջազգային, համամիութենական և հանրապետական գիտաժողովներին: Մասնակցելով կենսատեխնոլոգիայի և կենսորգանական քիմիայի բնագավառներում միջազգային հիմնադրամների մրցույթներին՝ նա չափել և ղեկավարել է մի շարք միջազգային (INTAS, INCO-COPERNICUS, CRDF, ISTC, SNSF, Volkswagenstiftung և այլն) և տեղական գիտական դրամաշնորհներ:

1997 թ. արդեն ճանաչված գիտնական Ա. Սադյանը պաշտպանում է ոչ սպիտակուցային ամինաթթուների ասիմետրիկ բիրմիմետիկ սինթեզին նվիրված դոկտորական ատենախոսությունը, որի համար նրան շնորհվում է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Կարճ ժամանակ անց նրան շնորհվում է նաև պրոֆեսորի կոչում: Այնուհետև, կենսատեխնոլոգիայի բնագավառում կատարած մեծածավալ գիտական, մանկավարժական, կազմակերպչական աշխատանքների և արդյունքում ձեռք բերված նվաճումների շնորհիվ, 2006 թ. Ա. Սադյանը ընտրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ «Կենսատեխնոլոգիա» և «Կենսորգանական քիմիա» մասնագիտություններով, իսկ 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս «Կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ:

2000 թ. Ա. Սադյանը, ով իր կատարած գիտական հետազոտությունների բարձր մակարդակի, գիտության եռանդուն կազմակերպչի ունակության և հասարակական

հարցերում ակտիվ դիրքորոշման համար անվերապահորեն վայելում էր ինստիտուտի կոլեկտիվի վստահությունն ու հարգանքը, նշանակվում է «Կենսատեխնոլոգիայի գիտ» ՓԲԸ տնօրեն:

Շնորհիվ երիտասարդ տնօրենի տքնաջան և եռանդուն աշխատանքի ինստիտուտը կարողանում է կարճ ժամանակամիջոցում դուրս գալ ճգնաժամային վիճակից: Այսպես, 2002 թ. Ա. Սադյանի ղեկավարությամբ 10 տարի ժամկետով ստեղծվում է չին-հայկական կենսաինժեներական գիտահետազոտական և փորձարարական կենտրոն, որը դառնում է Կենսատեխնոլոգիայի գիտատիտուտի ֆինանսավորող հիմնական աղբյուրներից մեկը: Կապ է հաստատվում գերմանական «DEGUSSA/REXIM» հանրահայտ գործընկերության հետ, ամրապնդվում են հարաբերությունները բուհական համակարգի հետ, ինստիտուտը ներգրավվում է ՀՀ բազային ֆինանսավորման համակարգում, գիտաշխատողները շահում են մի շարք դրամաշնորհներ և այլն:

Ա. Սադյանի տնօրինության տարիներին ինստիտուտը համալրվել է երիտասարդ կադրերով: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսություններ «Կենսատեխնոլոգիա» և «Կենսորգանական քիմիա» մասնագիտություններով:

Ա. Սադյանը մշտապես զբաղվում է նաև մանկավարժական գործունեությամբ: 1996 թ.-ից նա դասավանդում է ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում: 2003 թ.-ից նա հանդիսանում է ԵՊՀ ֆարմեքիայի և ֆարմակոգիայի ամբիոնի վարիչն է: 2017 թ. դեղագործական քիմիայի ամբիոնի հենքի վրա ստեղծվում է ԵՊՀ ֆարմացիայի գիտակրթական ինստիտուտ, և Ա. Սադյանը նշանակվում է ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար և այսօր ինստիտուտը արդյունավետ համագործակցում է որոշ առաջատար ռուսական և եվրոպական համալսարանների հետ:

2007 թ. ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ Ա. Սադյանը նշանակվում է «Հայաստանի քիմիական հանդես» ամսագրի գլխավոր խմբագիր, իսկ 2008 թ.՝ Արցախի գիտական կենտրոնի հետ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների համագործակցության կոորդինացիոն և պատասխանատու: 2009 թ.-ից Ա. Սադյանը ՀՀ ԳԱԱ կողմից Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) կոորդինացիոն խորհրդի և աշխատանքային խմբի անդամ է, Ամերիկյան քիմիական ընկերության անդամ, Եվրամիության «Սննդի որակի հսկման և տեխնոլոգիայի համաձայնեցում» ղեկավար ՀՀ-ում և ՀՀ-ում ՈԱՄԿ-ի հավատարմագրման համաձայնեցումի անդամ:

2010 թ.-ից Աշոտ Սադյանը ղեկավարում է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, որը ոլորտի լավագույն գիտաարտադրական կառույցն

է: Բացի միջազգային չափորոշիչներին համապատասխանող հիմնարար հետազոտություններից, այնտեղ իրականացվում են նաև այդ հետազոտությունների արդյունքների ապրանքայնացում, կիրառական բնույթի աշխատանքներ: Ա. Սադյանի անմիջական ղեկավարությամբ կենտրոնում ներդրվել են մի շարք տեխնոլոգիական մշակումներ, և կազմակերպվել են մի քանի տասնյակ փոքրածավալ արտադրություններ: Դրանց շարքում են.

- Ոչ սպիտակուցային ամինաթթուների փոքրածավալ արտադրական ունիվերսալ տեխնոլոգիան, որն այսօր համարվում է լավագույնը աշխարհում և հաջողությամբ կիրառվում է մի շարք զարգացած երկրներում (ԱՄՆ, Չինաստան, Ֆրանսիա, Գերմանիա և այլն): Ա. Սադյանի կողմից մշակված եղանակներով սինթեզված են զրականության մեջ չնկարագրված մոտ 200 նոր սերնդի օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուներ:

- Էկոլոգիապես անվնաս կենսապարարտանյութերի արտադրությունը:

- Սննդարդյունաբերության համար ֆերմենտային պատրաստուկների ստացման տեխնոլոգիաները:

- Բժշկության և կոսմետոլոգիայի կարիքների համար մրգահատապտղային և բուսական հումքից օշարակների և եթերային յուղերի ստացման տեխնոլոգիաները:

- Նոր բակտերիալ միջատասպան պատրաստուկների և վարակիչ հիվանդությունների հարուցիչների աճի կենսաարգելակիչների ստացման տեխնոլոգիաները:

- «Նարինե» կաթնամթերքի արտադրությունը և այլն:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ա. Սադյանը Կենսատեխնոլոգիա ՕԻԸ մասնագիտական խորհրդի նախագահն է:

Ա. Սադյանի հեղինակությամբ տպագրված են 320-ից ավելի գիտական աշխատանքներ, այդ թվում՝ 18 հեղինակային իրավունքներ, 230-ից ավելի գիտական հոդվածներ, որոնք ներկայացված են բարձր հղման գործակցով աշխարհի առաջատար գիտական հանդեսներում: Նա հեղինակ է 3 դասագրքերի և 2 մենագրության՝ տպագրված ՈԳԱ «HAYKA» և գերմանական «WILEY-VCH» հրատարակչություններում:

Ա. Սադյանի գիտական նվաճումները գնահատված են ՀՀ և արտերկրի մրցանակներով ու պարգևներով: Նշենք կարևորագույնները.

2001 թ.՝ Եվրամիության «Դեկարտի» անվան մրցանակ, որն առաջինն էր ՀՀ-ում:

2002 թ.՝ ՉԺՀ կառավարական «Բարեկամություն» շքանշան, որը նախադեպը չունի ՀՀ-ում:

2004 և 2011 թթ.՝ ՀՀ նախագահի երկու մրցանակ բնական գիտությունների բնագավառում կատարած գիտական աշխատանքի համար:

2013 թ.՝ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ:

2014 թ.՝ ԵՊՀ ոսկե մեդալ:

2015 թ.՝ ՀՀ պետական մրցանակ:

2021 թ.-ից Ա. Սադյանը ընտրվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ:

Հետաքրքիր է նշել մի քանի գաղափարներ, որոնք ընդգրկված էին Ա. Սադյանի տեսլականի մեջ, և դրանց մի մասն արդեն սկսել է իրագործվել.

Օ Հումանիտար և այլ ուղղվածությամբ ինստիտուտներում աջակցել մեզ համար ամենաթանկ կապիտալ հանդիսացող արժեքի՝ ազգային ինքնության պահպանմանը:

Օ Միջազգային համագործակցության ընդլայնման շրջանակներում ամրապնդել կապերն ազգային ակադեմիաների հետ:

Օ Ամրապնդել ՀՀ ԳԱԱ ինստիտուտների համագործակցությունը ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի հետ:

Օ Ֆինանսական խրախուսման համակարգի շնորհիվ աջակցել միջգիտակարգային հետազոտություններին՝ և՛ բաժանմունքների կազմում ընդգրկված ինստիտուտների միջև, և՛ այլ գիտակրթական կազմակերպությունների հետ:

Օ Ակտիվացնել այն կառույցների գործունեությունը, որոնք աշխատել են թույլ կամ ոչ կանոնավոր, ստեղծել օպտիմալացման ներդրման համակարգ:

Ցանկանում ենք մեր գործընկերոջը քաջառողջություն և հաջողություն մեր միացյալ աշխատանքում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

«Մարադա 30. չպատժված և շարունակվող ցեղասպանություն» գիտաժողով ԸԸ ԳԱԱ-ում



Ս.թ. ապրիլի 11-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Մարադա 30» չպատժված և շարունակվող ցեղասպա-

նություն» գիտաժողովը՝ նվիրված Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանում Մարադա գյուղի խաղաղ հայ բնակչության ցեղասպանական

գործողության 30-րդ տարելիցին և թուրք-ադրբեջանական շարունակական ցեղասպան քաղաքականությանը:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, «Ընդդեմ իրավապահ կամայականության» ՀԿ-ն և «Մարդու իրավունքների և ցեղասպանագիտության կենտրոն» ՀԿ-ն:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը ողջունեց գիտաժողովի մասնակիցներին. «Սա պատմություն է, որը մենք պետք է հիշենք: Սա եղել է ցեղասպանական շարքերի սկիզբը, որն իրականացվել է Ադրբեջանի կողմից հայ

ժողովրդի նկատմամբ: Պատմաբանների գործն է, մեր բոլորիս գործն է, որ սա մնա պատմության մեջ որպես հիշողություն, սերունդները հիշեն այս մասին»:

«Ընդդեմ իրավապահ կամայականության» ՀԿ գործադիր տնօրեն Լարիսա Ալավերդյանը նշեց. «Ցեղասպանությունը տեղի է ունեցել ամբողջ Հայաստանում: Այն իրականացվել է ոչ միայն Օսմանյան Թուրքիայի ղեկավարության կողմից, այլ նաև երիտթուրքերի և Ադրբեջանի կողմից»:

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մել-

➤3

«Այս տղան ձեր գերդաստանի պատիվը կդառնա, մեր ժողովրդի և ֆրանսիացի ժողովրդի պարծանքը»:
ՄԻՍԱԲ ՄԱՆՈՒՇՅԱՆ

Մարգարեական դարձան Մ. Մանուշյանի խոսքերը. տասնամյակներ անց շանտնի արքա Ազնավուրը պիտի դառնար Ֆրանսիայի խորհրդանիշներից մեկը՝ էյֆելյան աշտարակի և Մոնմարտրի կողքին, իսկ ֆրանսիացիներն էլ պիտի խոստովանեին, թե «Ֆրանսիան երկու Շառլ ունի, մեծ՝ դը Գոլը և փոքր՝ Ազնավուրը»:

Ազնավուրի լույս աշխարհ գալուց դեռ շատ առաջ երգիչ դառնալ երազող և դրա համար բոլոր տվյալներով՝ թավշյա բարիտոնով, արտահայտիչ աչքերով, հարուստ ներաշխարհով օժտված գեղեցկատես Մամիկոն Ազնավուրյանը 1917-ին օպերետային խմբի կազմում թիֆլիսից պիտի մեկներ Կոստանդնուպոլիս՝ չորսամսյա հյուրախաղերի, այնտեղ պիտի ծանոթանար տեղի թերթերից մեկի մշակույթի բաժնի աշխատակից, Ձմյուռնիայում թուրքերի վայրագությունների հետևանքով ընտանիքն ու հարազատներին կորցրած պարմանուհի Քնար Բաղդասարյանի հետ, իր համար անսպասելիորեն նրան ամուսնության առաջարկ անել, թատերախմբի ղեկավարը Քնարին վերցնել խմբի կազմում՝ երկու տարով մեծացնելով նրա տարիքը: Վրացահայ Մամիկոնն ու տաճկահայ Քնարը պիտի ամուսնանային և հրաշքով հեռանային արյամբ ողողված Օսմանյան Թուրքիայից՝ հյուրախաղերը շարունակելով Բուլղարիայում, ապա Դունաստանում: Եղեռնից փրկված շատ ու շատ հայերի պես Ազնավուրյաններն իրենց նորածին դստեր հետ պիտի ընտրեին Ֆրան-



ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՅՈՒՆԲՈՒՄ



սիան, ափ իջնեին Մարսելում, բայց շատերի նման չպիտի հաստատվեին այնտեղ, այլ տեղափոխվեին Փարիզ, որտեղ Մամիկոնի հայրը՝ Միսաքը արդեն տարիներ առաջ բնակություն էր հաստատել և Լատինական թաղամասում գնել ռեստորան: Տեղափոխվելով Փարիզ՝ նրանք պիտի վճռեին մեկնել ԱՄՆ և ամիսներ անցկացնեին՝ ամերիկյան վիզայի սպասելով: Ամերիկյան վիզան ստանալուց հետո, երբ արդեն նրանք սիրել էին ֆրանսիական հյուրընկալ հողը, 1924-ի մայիսի 22-ին Փարիզի 5-րդ թաղամասում պիտի լույս աշխարհ գար Շահնուր-Վադիմակ Ազնավուրյանը՝ Ազնավուրյանների գերդաստանի անդամիկ ֆրանսիացին, որդին անհայտեցիկ մնացած Մամիկոն Ազնավուրյանի (ծնված 1897-ի մայիսի 26-ին Ախալցխայում) և հայրենիք չունեցող Քնար Բաղդասարյանի (ծնված 1902-ի մայիսի 10-ին, Թուրքիայի Ձմյուռնիա քաղաքում): «Հայրենիք» չունեղ նա Շառլի ավագ քույրը՝ հունական Սալոմիկոն ծնված Արդան, որին ծնողները անվանակոչել էին Վերդիի հանրահայտ օպերայի գլխավոր հերոսուհու անունով՝ ի նշան երախտագիտության իտալական մավի հրամանատարի, որի օգնությամբ նրանք կարողացան դուրս պրծնել դժոխակ Թուրքիայից: «Մայրս արդեն մավի վրա է լինում,- հետագայում կհիշի աշխարհահռչակ շանսոնիկներ,- երբ մի թուրք զինվորական, արհամարհելով հորս անձնագիրը, հայերենը լսելով, փակում է նրա ծանապարհը: Օգնության է հասնում մավի հրամանատարը՝ գոչելով, թե մավը միջազգային տարածք է, և ոչ ոք ոչ մի դեպքում չի կարող խանգարել ուղևորին բարձրանալ այնտեղ»:

Սակայն մասնեմյան անձնագրում դրոշմված «ամհայրենիք» բառը ոչինչ էր նշանակում, քանզի նրանք բոլորն էլ գիտեին, որ ունեն հայրենիք, խոշտանգված, ավերի մատն-

ված ու հարկադրաբար լքված հայրենիք, որը, սակայն, անհնար է երբևէ մոռանալ, և որը կոչվում է ՀԱՅԱՍՏԱՆ:

«Ես ֆրանսիացի եմ՝ հայկական ծագումով,-հետագայում կգրի Ազնավուրը: Ֆրանսիայում ինձ երբեք օտարազգի չեմ համարել, սակայն, միևնույն ժամանակ, չեմ մոռացել, որ ծնունդով հայ եմ: Ֆրանսիայում մենք մեր ուրույն տեղն ունենք՝ Գառզու, Թրուայա, Վերմոն...»: Այո, Ֆրանսիան պիտի դառնար բազում հայորդիների երկրորդ հայրենիքը, այստեղ պիտի գործեին և ֆրանսիական հողում իրենց հավիտենական հանգիստը գտնեին ականավոր հայորդիներից շատերը՝ Արմենակ Շահնուրյանն ու Հակոբ Գյուրջյանը, ֆրանսիական կրթությամբ ու պիտի իրենց ստեղծագործական վարպետությունը հղկեին Փանոս Թերլեմեզյանն ու Հովհաննես Չեքիջյանը:

Եվ տարիներ անց արդեն ականավոր երգիչ, կոմպոզիտոր, բանաստեղծ, դերասան, Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրը պիտի խոստովաներ. «Ֆրանսիան իմ երկիրն է, Հայաստանը՝ իմ հավատը»: Ազնավուրն առաջին ֆրանսիացի կատարողն էր, ով Եվրոպայում ստացավ պատիվն ծայրասկավառակ: Նրա երգերը կատարել են ինչպես ինքը, այնպես էլ Ռեյ Չարլզը, Բոբ Դիլանը, Շիրլի Բեյսին, Լայզա Մինելլին, Խուլիո Իգլեսիասը, Ֆրեդ Աստերը, Բինգ Կրոսբին և շատ ու շատ այլ հանրահայտ արտիստներ: Ազնավուրը զուգորգերով հանդես է եկել Ֆրենկ Սինատրայի, Սելին Դիոնի, Լուչիանո Պավարոտիի, Պլաչիդո Դոմինգոյի, Պատրիսիա Կասսի, Լայզա Մինելլիի և այլոց հետ:

Ավելի քան 1000 երգ է հեղինակել Ազնավուրը, որոնցից շատերն արդեն մտել են ֆրանսիական տարադայի զանազան, դարձել էստրադայի կլասիկա: Նրա գրչին են պատկանում «Monsieur Carnaval» (1965), «Douchka» (1973) և «Lotrek» (2004, նվիրված է ֆրանսիացի նկարիչ Անրի Թուլուզ-Լոտրեկին) մյուզիքլների, ինչպես նաև մի քանի ֆիլմերի երաժշտությունը: Ազնավուրի աշխարհահռչակ երգերի թվում են «Բոհեմը», «Սիրո թմբուկները», «Մաման», «Սիրուց հետո», «Հավերժական սեր», «Ոչ մոդայիկ ուրախություններ», «Երիտասարդություն», «Դեռ երեկ», «Իզաբել», «Նա», «Ինչպես ասում են», «Ավել Մարիա», «Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել», «Ես արդեն ներկայացրի», «Քանի որ», «Սա է վերջը», «Ալելույա», «Երկու կիթառ», «Տար ինձ», «Եվ սակայն», «Քաղաքը», «Պետք է գիտնալ», «Մեռնել համուսնիս» և այլն:

«Ես հարյուր տոկոսով հայ եմ և հարյուր տոկոսով ֆրանսիացի: Շատ կապված եմ իմ արմատներին, ամբողջականորեն հայ եմ իմ կենցաղով ու սովորույթներով և ամբողջակամորեն ֆրանսիացի՝ իմ արվեստի մեջ: Ու երկվորյուն չկա այդ երկու հանգամանքների միջև: Շատ բան եմ ժառանգել իմ ծնողներից: Ես գաղթականի զավակ եմ և այդ իսկ բնույթով ունեցել եմ նվաճելու ձգտում: Եվ այդպես է, որ հայը ամուսնով մկաճեց ֆրանսիայում, և ֆրանսիացին՝ աշխարհում: Ես հայրենասեր չեմ, ես հայրենամոլ եմ»,- կասի Ազնավուրը:

1975-ին Հայոց Մեծ եղեռնի 60-ամյա տարելիցի կապակցությամբ Ապարտիդի զավակ Ազնավուրը, ում ամերիկացիները կկոչեն a survivor (վերապրող), իր մշտական համահեղինակ Ժորժ Կառվարենցի հետ հորինում է «Ils sont tombés» («Նրանք ընկան») բալլադը՝ յուրատեսակ ռեքվիեմ միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակին, որոնց թվում էին Ազնավուրի թուրքահպատակ մոր ծնողները, երկու եղբայրներն ու քույրը, ովքեր անհետացան Մեծ եղեռնի տարիներին, և որոնց փնտրեց մայրն իր ողջ կյանքում և մինչև կենաց վախճանն ապրեց նրանց գտնելու հավատով:

«Նրանք ընկան ու այդպես էլ չհասկացան, թե ինչու, Տղամարդ, կին, թե երեխա, որ ապրել էին ուզում այնքան, Հարբաժի պես մարմնակործան նրանք ընկան, Հոշոտված ու սրի քաշված, աչքերը բաց, սարսափազդու»... (թարգմ.՝ Սամվել Գասպարյանի):

Երգը, որը ծայնագրվեց Լոնդոնի Nova Sound ստուդիայում 1975 թվականի ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը, հնչել է ոչ միայն ֆրանսերեն՝ Ազնավուրի կատարմամբ, այլև հայերեն, անգլերեն և ռուսերեն:

Տարիներ անց իր ծնողներին և մանկությանը Ազնավուրը կնվիրի բնթանքով, կարոտաբաղձությամբ և լիրիզմով ներծծված երգը, որն այդպես էլ կվերնագրի՝ «Ինքնակենսագրություն»: Հետաքրքրական է Ֆրանսիայով մեկ շատ արագ տարածված և ջերմ ընդունելություն գտած երգի ստեղծման պատմությունը. այստեղ հեղինակը վերադառնում է իր մանկությանը, իր արմատներին: «Ես իմ ողջ կյանքում զգացել եմ իմ ազգային, ընտանեկան արմատները, ինչը չափազանց կարևոր է արտիստի համար: Իմ մեջ բնական ցանկություն առաջացավ գրել իմ հուշագրությունը: Ավարտելով այն՝ ես ինքս ինձ համար քննության պես մի բան սարքեցի, որոշեցի մի քանի թույլ տևողությամբ երգում տեղավորել հուշագրության մի քանի գլուխ»:

Այդ քննությունը փայլուն հաջողություն ունեցավ: Հայկական թեմատիկայի վրա են հյուսված մաս նրա «Ջան» և «Քնքուշ Հայաստան» երգերը: Դստեր՝ Սեդա Ազնավուրի հետ նա հայերեն երգել է Սայաթ-Նովայի «Աշխարհում» երգը: Ազնավուրը երբեք չմոռացավ իր պատմական հայրենիքը: 1988-ի Սպիտակի երկրաշարժից ընդամենը մի քանի օր անց նա այցելում է Հայաստան, տուժածներին օգնում թե՛ փողով, թե՛ առաջին անհրաժեշտությամբ պարագաներով՝ հագուստ, սնունդ, դեղորայք: Հազարավոր մարդկային կյանքեր խլած աղետալի երկրաշարժից հետո Ազնավուրը հիմնում է «Aznavour pour l'Arménie» (Ազնավուրը՝ Հայաստանին) բարեգործական ասոցիացիան և տուժածներին օգնելու նպատակով կազմակերպում մի քանի ակցիաներ: Դրանցից մեկի համար նա հրավիրում է Անրի Վերմոյին և պոպ-երաժշտության, թատրոնի և կինոյի 90 համաշխարհային աստղերի. նրանց հետ համագործակցելով՝ «Pour toi, Arménie» («Քեզ համար, Հայաստան») երգի հիման վրա, որի տեքստը գրել էր Ազնավուրը, իսկ մեկ օր անց Կառվարենցը հորինել էր մեղեդին, ստեղծվում է բարեգործական տեսախոլովակը, որը վաճառվեց ռեկորդային քանակով՝ 2 միլիոն օրինակ: Երգի կատարմանը մասնակցում են Ադամոն, Ռոզի Արմենը, Շառլ Ազնավուրը, Կատյա Ազնավուրը, Ժիլբեր Բեկոն, Ժյուլիեն Կլերքը, Ջոննի Յոլիդեյը, Պատրիսիա Կասար, Միրեյ Մաթյոն, Վանեսսա Պարադին, Պիեռ Ռիշարը, Շուշաննան, Մարինա Վադին և էլի շատ ու շատ ուրիշներ: Երգի ձայնակավառակների և մագնիսոֆոնային ձայնագրությունների իրացման, ինչպես նաև տեսախոլովակի ցուցադրման ողջ հասույթը փոխանցվում է արհավիրքից տուժածների ֆոնդին:

«Pour toi, Arménie» («Քեզ համար, Հայաստան») երգն այսօր էլ՝ իր ստեղծումից 33 տարի անց, շարունակում է ապրել: 2022 թ. մարտի 31-ին՝ Ռոսսիմիի «Ստաբատ Մատերի» հրաշալի կատարումից հետո, «Pour toi, Arménie»-ն ֆրանսերենով ինչեց որպես բիս՝ Հայաստանի ազգային ակադեմիական երգախմբի և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ, Մատեոռո Հովհաննես Չեքիջյանի անգլագական ղեկավարությամբ:

Այսօր էլ առավել քան արդիական է Ազնավուրի հեղինակած տեքստը, որով նա վերստին դիմում է հայոց պատմության դժվարագույն փուլերից մեկն ապրող իր հայրենակիցներին, ովքեր այսօր ևս, ինչպես դաժան երկրաշարժից հետո, կարիք ունեն կարեկցանքի ու վշտակցության, նաև՝ մխիթարության ու լուսավոր ապագայի հանդեպ հավատի նորոգման՝ «Ոսկյա արևը թող ժպտա մի բուռ քո հողին, Հար ցնձա՛, իմ Հայաստան աշխարհ: Արցունքը քո սրբիր, թող հույսը քեզ օգնի, Գոտեպնդվիր, իմ ժողովուրդ...»

(թարգմ.՝ Գևորգ Արմենյանի):
ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

«Մարադա 30. չպատժված և շարունակվող ցեղասպանություն»։ Գիտաժողով ԸԸ ԳԱԱ-ում

➤2 քոնյանը նշեց. «Այն, ինչ տեղի է ունեցել 30 տարի առաջ, ամբողջ ցեղասպանական քաղաքականության շղթայի մեկ օղակն էր: Ցեղասպան քաղաքականությունն ուղղակիորեն Օսմանյան կայսրությունից անցավ Ադրբեջանի Առաջին հանրապետությանը, խորհրդային տարիներին ունեցավ այլ դրսևորումներ, իսկ Երրորդ հանրապե-

տության ժամանակ տեսանք՝ Ադրբեջանի կողմից ինչպիսի դրսևորումներ եղան 1991-1994 թթ.-ին, 2016 թ.-ի ապրիլին և 2020 թ.-ին: Մարադայի ցեղասպանությունը մնացել է ստվերի տակ: Դա ռազմական հանցագործության օրինակ էր խաղաղ բնակչության նկատմամբ: Այս գիտաժողովը կլինի ևս մեկ խթան՝ ավելի խորությամբ այն ուսում-

նասիրելու և ջրի երես հանելու այն ամբողջ ցեղասպան քաղաքականությունը, որն Ադրբեջանը ժառանգել է Օսմանյան Թուրքիայից և այսօր շարունակում է»:

Գիտաժողովի ժամանակ քննարկվեցին Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, հայերի ցեղասպանության շարունակությունը և թուրք-

ադրբեջանական իշխանությունների պատասխանատվությունը, հետպատերազմական իրավիճակում հայտնված հայության և հայկական համայնքների հիմնախնդիրները: Ցուցադրվեց «Մարադա 1992՝ 20-րդ դարավերջի Գողգոթա» ֆիլմը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Չմոռանալ, հիշե՛լ, հիշե՛լ ու հպարտանալ Հայկական «Նեմեսիսով»

Այսօր ցավով պիտի արձանագրենք, որ մերօրյա երիտասարդությունը ու նաև մեծերից շատերը ոչինչ չգիտեն «Նեմեսիս» գործողության մասին, որը իրականացվեց ուղիղ 100 տարի առաջ: Եվ երիտասարդությունն ու նաև ժողովուրդը չեն մեղավոր դրա համար: Մեր պատմաբանները, մեր գրողները չեն փառավորել ու նաև չեն արժևորել առասպելական այդ պատմությունը՝ ինչպես, օրինակ, Հայկի և Բելի, Առյուծ Միերի, Դավիթ Սասունցու, մեր լեզվագետ ֆիդայիների, Սարգստյանի, Բաշ Ապարանի, Արցախյան հերոսամարտի պատմությունները:

Այս բացի համար մեղավոր են և՛ մեր պատմաբանները, և՛ մեր գրողները և՛ հայ մտավորականության էլիտան, և՛ մանավանդ դպրոցական կրթությունը:

«Նեմեսիսը» մարդկային քաղաքակրթության հիմունքներում կանգնած հին հույների Հատուցման և վրեժխնդրության հեթանոս Աստվածն է: Ասել կուզի հատուցումն ու վրեժխնդրությունը Աստվածային արարք է՝ նաև գովելի ու խրախուսելի:

«Նեմեսիս» օպերացիայի հերոսների ուխտը մեկն էր՝ վրեժ լուծել տուն ու տեղից՝ զրկված իր 1,5 միլիոն մահատակների համար, որի հեղինակ թուրքը մպատակ ուներ «աշխարհում մեկ հայ թողնել և այն էլ թանգարանում»:

2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի Օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը՝ Բունդեսթագը, մեկ դեմ, մեկ ձեռնպահ ձայնով 1915 թ. Արևմտյան Հայաստանում Օսմանյան թուրքիայի իրականացրած ջարդերը ճանաչեց որ-

պես ցեղասպանություն:

101 տարի առաջ՝ ճիշտ նույն օրը, Բեռլինի դատարանն անմեղ հռչակեց Սողոմոն Թեհլիրյանին, մարդու, որն օրը ցերեկով Բեռլինի կենտրոնում մարդ էր սպանել, սակայն մարդասպան չճանաչվեց:

Մարդկության պատմության մեջ առաջին և վերջին անգամ փաստացի մարդասպանն արդարացվեց ու հենց դատարանի դաշիլից ազատ արձակվեց: Ինչո՞ւ, որովհետև Առաջին աշխարհամարտում թուրքիայի դաշնակից Գերմանիայի օրենքի ուժով և օրենքով հիմնավորվելով դատարանը անմեղ հռչակեց մարդասպանին, որովհետև եղեռնի իրագործողներն արժանի էին մահապատժի:

Անցել է 100 տարի. այդ արյունարբու մարդասպանը չի հրաժարվել իր հրեշավոր ծրագրից, իսկ մեր իշխանությունները բարեկամություն և խաղաղություն են հայցում մարդասպանից՝ մոռացած, որ հայի տեսակը ոչնչացնելու թուրքի դիվային ծրագիրն ուժի մեջ է նաև այսօր, ամեն օր, ամեն ժամ:

Եվ նրանից խաղաղություն ու բարեկամություն մուրալը պարզապես ցնորք է կամ գիտակցված սուտ և կեղծիք: Թուրքի հետ պետք է խոսել «Նեմեսիսի» ճշմարիտ և արժանապատիվ հայորդիների վրեժխնդրության և անպայման հատուցելու ու պատժելու լեզվով:

Հատուցումը և վրեժը Աստվածային ուղերձ է, արժանապատվություն, ապրելու իրավունք և երաշխիք: Այդ նվիրական և սուրբ գործին էին նվիրված ֆիդայիները, նրանք, որ կենաց-մահու կռիվ

էին մղում Սարգստյանի, Բաշ Ապարանու, Ղարաբլիսայում ու նաև Մեծ հայրենականի ռազմաճակատներում, որովհետև Գերմանիայի դաշնակից անիժնյա թուրքը պատերազմի տարիներին 700.000 բանակը կանգնեցրել էր Հայաստանի սահմանին և սպասում էր Ստալինգրադի անկմանը, որ մտնի Հայաստան և իրականացնի Թալեթ փաշայի հրեշավոր ծրագիրը, այն է՝ երկրի երեսից խառն վերացնի հայ ազգը:

Թալեթը կուռք է այսօրվա թուրքիայում, իսկ նրա ծրագիրը՝ երազանք և կատարման ենթակա: Ասել է՝ թուրքը չի հրաժարվել իր հրեշավոր ծրագրից՝ վերացնել, ոչնչացնել հայ ժողովրդին: Նույն երազանքն ունի նրա փոքր եղբայրը՝ Ադրբեջանը, որտեղ երեխաները երազում են մորթել հային, իսկ մեծերը՝ կրակել խաղաղ բնակիչների վրա, իսկ սպան գիշերով կկացնահարի հայ սպային, կդատապարտվի և երբ կվերադառնա Ադրբեջան, կստանա զնդապետի կոչում, բարձր պաշտոն և կհռչակվի ազգային հերոս:

Ասելս այն է, որ **թուրքը մնում է թուրք** և չի հրաժարվի իր հրեշավոր ծրագրից: Իսկ մենք՝ մեր արժանապատիվ նախնիների հետնորդներս, խաղաղության ենք պատրաստվում մարդասպանի հետ, որ հեշտացնենք նրա հրեշավոր ծրագրերի իրականացումը՝ վերացնել հայ ժողովրդին և Հայաստանը:

Տողերիս հեղինակը ղևանջի և պատերազմի կոչ չի անում, այլ ուզում է, որ հայն արժանապատիվ ապրի Հայրենի հողում, այն չղարծնի թուրքական վիլա-

յեթ և, ինչպես հազարամյակներ շարունակ, մնա հպարտ և արժանապատիվ հայ:

Աղերսված, ծնկաչոք ու մուրացված «խաղաղության» այդ պիղծ թուրքը ստորագրելուց առաջ մեր միահեծան վարչապետը թող հաշվի նստի հայ ցեղի պատմական հիշողության հետ, կարծիք հարցնի մեր մահապարտ ֆիդայիներից, Սարգստյան փառավոր հաղթանակը կերտողներից, Սփյուռք դարձած 10 միլիոն անհայրենիք հայերից, վերջին պատերազմում մահատակված հազար-հազար հրաշք տղաներից (որոնք մեր ապագան էին), որդեկորույս մայրերից և հայրերից, հատկապես «Նեմեսիս» օպերացիայի մահապարտներից, որոնք արյան կանչով, ուղիղ հարյուր տարի առաջ վճռեցին վրեժ լուծել եղեռնագործ թուրքից և իրենց երդմանը հավատարիմ կարողացան աշխարհի տարբեր ծայրերում գտնել և շանսատակ անել եղեռնը ծրագրած և ղեկավարած բոլոր հրեշներին: Որովհետև ոճրագործից խաղաղություն չեն մուրում մանավանդ մարդասպան թուրքից:

Հայի գեներում դեռ կենդանի է Նեմեսիս Աստծո հատուցում և վրեժ պատգամը, և կգա այն օրը, երբ հայը կիրականացնի այն, որպեսզի ապրի հպարտ ու արժանապատիվ, քանզի «մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում»:

Իսկ հիմա հակիրճ «Հայկական Նեմեսիս» օպերացիայի մասին:

Ա. ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՄԵՍԻՍԻՍԸ ԿԱՄ «ՆԵՄԵՍԻՍ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Գործողությունը «Նեմեսիս» է անվանվել հատուցման ու վրեժխնդրության հին հունական աստվածուհի Նեմեսիսի անունով: Հետագայում կոչվել է Հայկական Նեմեսիս (1921-22 թթ.):

Առաջին աշխարհամարտում (1914-1918 թթ.) Օսմանյան կայսրության պարտությունից (1918 թ.-ի հոկտեմբերի 30) հետո երիտթուրքական կառավարության ու կուսակցության պարագլուխները գերմանական սուզանավով Կոստանդնուպոլիսից տեղափոխվել են Գերմանիա: Թուրքիայի՝ 1918 թ. դեկտեմբերի 16-ի դեկրետով «Արություն և առաջադիմություն» կառավարող կուսակցության և երկրի կառավարության պարագլուխներ Թալեթը, Էնվերը, Ջեմալը, Բեհաեդդին Շաքիրը և ուրիշներ մեղադրվել են թուրքիան պատերազմի մեջ ներգրավելու, հա-

յերի տեղահանությունն ու ցեղասպանությունը կազմակերպելու համար և հեռակա կարգով դատապարտվել մահվան:

1919 թ.-ին Երևանում ՀՀԴ կուսակցության IX ընդհանուր ժողովը որոշում է ընդունել ի կատար ածել երիտթուրքական պարագլուխների նկատմամբ դատավճիռը: Արձանագրվել է ցեղասպանության հանցագործների 650 անուն, որոնցից առանձնացվել են 41 գլխավոր հանցագործները:

«Նեմեսիսի» պատասխանատու մարմին ղեկավարը Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան) էր, Հատուկ ֆոնդին՝ Շահան Սաթնակյանը: Շահան Նաթալին և Գրիգոր Սերջանովը ղեկավարել են գործողությունը և ապահովել նյութական միջոցները: Հանցագործներին հայտնաբերելու գործը ղեկավարել է

Հրաչ Փափազյանը, որը՝ որպես թուրք ուսանող, թափանցել է երիտթուրքական վտարանդիական բարձր շրջանակներ: Գործողության կազմակերպչական կենտրոններն էին «Ճակատամարտ» (Կոստանդնուպոլիս) և «Դրոշակ» (Բոստոն) թերթերի խմբագրատները: Վրիժառուների խմբերը (3-5 մարդ) հետապնդում էին որոշակի հանցագործի և հարմար պահին դատավճիռն ի կատար ածում: Կատարվել են վրեժխնդրական հետևյալ գործողությունները:

Սողոմոն Թեհլիրյանը (Թեհլիրյան) 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում իրագործել է թուրքիայի ներքին գործերի նախկին նախարար Թալեթի մահավճիռը:

Արշավիր Շիրակյանը 1921 թ. դեկտեմբերի 5-ին Հռոմում սպանել է երիտթուրքական կառավարության առաջին վարչապետ Սայիդ Հալիմին:

Արամ Երկանյանն ու Արշավիր Շիրակյանը 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում վերացրել են Տրապիզոնի նախկին մահաճապատ Ջեմալ Ազմիրին և հակահայկական «Հատուկ կազմակերպության» հիմնադիր Բեհաեդդին Շաքիրին:

Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը 1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում սպանել են թուրքիայի ռազմածովային ուժերի նախկին նախարար Ջեմալին. այդ գործողությանը մասնակցել են նաև Ստեփան Ծաղիկյանը և Զարեհ Մելիք-Շահնազարյանը:

Հայ վրիժառուները հետապնդել են նաև թուրքիայի նախկին ռազմական նախարար Էնվերին, որը Գերմանիայից Բաքվով անցել էր Միջին Ասիա և դարձել հակախորհրդային բասմաչական շարժման ղեկավարներից: Այստեղ **➤5**



Սողոմոն Թեհլիրյան
(1897-1960 թթ.)



Արամ Երկանյան
(1900-1934 թթ.)



Ստեփան Ծաղիկյան
(1886 թ.-?)



Արշավիր Շիրակյան
(1888-1968 թթ.)



Արշավիր Շիրակյան
(1900-1973 թթ.)

Մուշեղ ԳԱԼՇՈՅԱՆ

ԲՐԱԲԻՈՆ ԾԱՂԻԿ ՈՐՈՆՈՂԸ

Խաչիկ ԴԱՇՏԵՆՑԻ ԾԱՆՈՅԱՆ 70-ԱՄյԱԿԻ ԱՊՐԻԼԻ ԳՐԱԾ ԽՈՍՔԻՅ

...Թեև Մեարոսն ու հարևան գյուղացին վեճի մեջ են՝ որքան է միլիոնը։ Վիճում են ու գնում ս. Ախբերիկ՝ պարզելու, թե որքան է միլիոնը՝ հարյուր հազար, թե՞ հազար-հազար։ Հենց այդքան հայ գինվոր է հարկավոր՝ հայոց լեռները մաքրելու չարքերից... Բայց, ուզում եք հավատացե՞ք, ուզում եք՝ ոչ. մի տղա, մեծ-մեծակ մի ջահել՝ Կարմիր իրիցու տնից, ամուսն Արաբո, ծին հեծած կանգնել է Ծիրնկատարին, սուլթան Համդիին կռիվ է հայտարարել։

Հայ ֆիդայական շարժման սկիզբը այսպես հեքիաթային, բայց պատմականորեն ճիշտ, մեզ ներկայացնելով, հաշիկ Դաշտենցը հարց է տալիս՝ որքան ժամանակ է անցել, ահա, քսաներորդ դարի մուտքն է, բայց Դավթից մինչև Արաբո ծիածանի կամարի տակ լեռների ու նրանց մարդկանց ճակատագրում ի՞նչն է փոխվել, կայծակնահար մույն լեռներն են, չարքերով լցված մույն վիտերը, իր մեակությամբ խաչված մույն ժողովուրդը և ըմբոստ ճակատով մույն միայնակ գինվորը՝ ամուսն Դավթի թե Արաբո։

...Մոսե Ինոն հասել է մինչև Ինգիլիզ և քրիստոնյա թագավորից, ի տեղ օգնության, մի օրորոց է ստացել նվեր։ Այդ լեռների պատմիկական աշխարհի հզորներից հզոր ո՞ր թագավորի դուռն էլ գնար, այդ օրորոցը կստանար՝ օրորի՜ր հույսը։

Հույսը դարձյալ հրաշքն է։ Պայթող աղբյուրի ակունքից հայտնվող Քուռկիկ Ջալալին, երկրի ընդերքից հայտնվող

հրեղեն ծին։

Այդ հրեղեն ծին Արաբոն էր։

Այդ հրեղեն ծին Աղբյուր Սերոբն էր, Սպաղաց Մակարն էր, Գևորգ Զաուշը, Անդրանիկը, Դժոխք Հրայրը, Սմբատը, Գալեն, Չոլոն, Մորուք Կարոն, Արծիվ Պետոն, Սևաթեցի Սաքոն, Կայծակ Անդրիասը, Տեր Քաջի Ադամը, Կոտո Հակոբը, Լաճկանցի Արթնը, Առդա Ջորիկը, Ալադին Միսակը, Բրինդարը, Սեյդո Պողոսը, Արտոնքա Ջնդոն, Մուքոն, Բամբակու Մելոն, այդ հրեղեն ծին Հենիքի Մամուկն էր, Փեթարա Մամուկը, Փեթարա Թադեն, Փեթարա Ախոն, Փեթարա Իսրոն...

Պայթող Աղբյուրի հրաշքը հայ ֆիդայիներն էին։

Հրեղեն շնչով այրեր, հայրենիքի մատաղացու որդիներ, որ ապրեցին միայն հայրենիքի կյանքով և դեռ իրենց կենդանության ժամանակ դարձան պատմություն։

...Ամօրենները դժոխք էին դարձրել այն երկիրը, ուր գործում էին հայ ֆիդայիները։ Եվ նրանք կամոք էին հագել դժոխքի բոցերից կարված կրակե շապիկները։ Հայրենիքի որդու առաքելությունն էր դա։ Ինչպե՞ս կարող է լինել հանգիստ և անձնական ապահով կյանք, երբ հայրենիքն ինքն է անապահով, որտեղի՞ց պետք է հայտնվի անձնական երջանկությունը, երբ հայրենիքն ինքն է ապերջանիկ, ո՞ր կտանի անձնական փառքի ձգտումը, երբ հայրենիքն ինքն է անփառունակ, ո՞րն է անձնական սերը, երբ սի-

րո օրորոց հայրենիքը դժոխքի վերակացուն է օրորում։

Քարանձավն էր նրանց տունը, ամենաշատը, ամենաշատը՝ գյուղեզրի մարագը կամ գոմը։ Խոտը կամ ձյունն է նրանց անկողինը, փոթորիկն է նրանց սպիտակեղենը, քարն է նրանց բարձը, սեփական շունն է նրանց կրակը։ Ջենքի հետ պսակված, ուսապարկերում մի կտոր կորեկից կամ մի բուռ փոխինձ, ուսապարկերում իրենց պատանքացուն, հպարտ ճակատները թշնամու նենգ գնդակի դեմ բաց, զօր ու գիշեր լեռներում քայլում են կրակե շապիկ հագած աստվածները։

Արարչություն է անանձնական կյանքը։ Այդպիսի կյանքով կարող է ապրել միայն նա, ով իր ազատությունը չի զատում հայրենիքի ազատությունից, ով իր փառքը չի բաժանում հայրենիքի փառքից, ով իր երջանկությունը չի բաժանում հայրենիքի երջանկությունից, ով իր սերը չի զատում հայրենիքի սիրուց... Ասպետություն, ազատություն, հերոսություն, փառք և երջանկություն է անանձնական կյանքը։ Եվ անսահման է անանձնական կյանքի սահմանը։

Կարմիր իրիցու տան երբեմնի ավետարանում գրված է եղել, թե Ավետյաց երկրի լեռներում մի ծաղիկ է աճում՝ երջանկության Բրաբիոն ծաղիկը։ Շատերն են ելել երջանկության ծաղիկը որոնելու, են գլխեն որոնել են, բայց ոչ մեկը չի գտել։ Եվ երջանկության ծաղիկ ետևից գնացողը այլևս համարվում էր ցմորքով


տարված, խենթ։

Այդ «խենթը» Կարմիր իրիցու տան Արաբոն էր։

Հայոց լեռների երջանկության ծաղիկ որոնող «խենթերը» ֆիդայիներն էին։

Մի տղա, միայնակ ու ասպետ մի գինվոր՝ արյունարբու ու նենգ մի բանակի դեմ։ Յոթ գինվոր՝ յոթ բանակի դեմ։ Ամենաշատը քառասուն գինվոր՝ քառասուն հազարանոց արյունարբու ու նենգ բանակի դեմ («Քառասուն» թիվը հեքիաթային է, իսկ պատմությունը՝ իրական)։ Միայնակ գինվորը գիտեր, որ մի բանակի հաղթել չի կարող։ Քառասունը գիտեին, որ հաղթանակը քառասուն գազ խորը՝ քառասուն ջրաղացքարի տակ է, սակայն... որոնում էին իրենց լեռների Բրաբիոն ծաղիկը։ Կհաղթես, թե կպարտվես՝ չարի դեմ չարանալը առաքելություն է, կգտնես, թե ոչ՝ հայրենիքի երջանկության ծաղիկը որոնելը հայրենիքի որդու պարտքն է։

Ուխտին հավատարիմ՝ գնեցին պսակված, նրանցից շատերը փաթաթվեցին իրենց պատանքացու կտավներով և, որպես Բրաբիոն ծաղիկի հունդեր, թաղվեցին սարերում։ Ով մնաց՝ տեսավ հայ Գողգոթան։ Եվ տեղահանվող, լլկվող, մորթվող ու այրվող ժողովրդի համար դարձավ պաշտպան բանակի խորհրդանիշ և բանակ, առաջնորդի խորհրդանիշ և առաջնորդ, կամքի խորհրդանիշ և կամք, հույսի խորհրդանիշ և հույս...



ԱՐԱՐՈ




ԱՐՏՅՈՒՐ ՍԵՐՈԲ



ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ



ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆ (Մախուտո)



ԳԵՎՈՐԳ ԶԱՄԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՄԵՄԻՍԸ...

➤4 նրա սպանությունը կազմակերպել է կարմիր բանակի գործադրամատար Հակոբ Մելքունովը (Մելքունյան)։ 2ի հաջողվել գտնել երիտ-

թուրքական կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Նազիմին։ Սակայն տարիներ անց նա Գերմանիայից վերադարձել է Թուրքիա, անհաջող

մահափորձ արել Մուստաֆա Քեմալի դեմ, որի համար և մահապատժի է ենթարկվել։ Բացի երիտթուրքական պարագլուխներից, հայ վրիժառու-

ները ոչնչացրել են Ադրբեջանի մուսավաթական կառավարության գործիչների, որոնք մեղադրվում էին 1918 թ. սեպտեմբերին Բաքվում հայերի զանգ-

վածային կոտորած կազմակերպելու համար։

Արամ Երկանյանը 1920 թ. հունիսի 19-ին Թիֆլիսում սպանել է Ադրբեջանի նախկին վարչապետ Ֆաթալի խան Խոյսկուն, իսկ Միսաք Թորլաքյանը 1921 թ. հունիսի 19-ին Կոստանդնուպոլսում գնդակահարել է Բաքվի և Շուշիի հայերի ջարդերի կազմակերպիչ, Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բեյբուս խան Ջևանշիրին։

«Նեմեսիսի» վերաբերյալ հրատարակված երկերից հատկապես ուշագրավ են վրիժառուներ Արամ Երկանյանի «Այսպես սպանեցիք» (Բեյբուս, 1954 թ.), Սողոմոն Թեփլիյանի «Վերհիշումներ» (Կահիրե, 1956 թ.), Գրիգոր Մերջանովի «Քանի մը հուշեր Արշավիր Շիրակյանի» (1957 թ., Փարիզ) ու «Իմ կտակը» (1972 թ., Բեյրութ), Միսաք Թորլաքյանի «Օրերուս հետ» (Բեյրութ, 1963 թ.) գրքերը։



Արմեն Գարո (Գարեգին Փաստրնաճյան, 1872-1923 թթ.), «Նեմեսիս» գործողության պատասխանատու մարմնի ղեկավար



Շահան Նաթալի (Տեր-Հակոբյան Հակոբ, 1884-1983 թթ.), գրող, խմբագիր, պատմաբան Գ. Մերջանովի հետ ղեկավարել է «Նեմեսիս» գործողությունը և ապահովել նյութական միջոցները



Գրիգոր Մերջանով (1880 թ. մահ. թ. անհայտ), Շահան Նաթալիի հետ ղեկավարել է «Նեմեսիս» գործողությունը և ապահովել նյութական միջոցները



Հրաչ Փափազյան (1892-1960 թթ.), ղեկավարել է հանցագործներին հայտնաբերելու գործը

ԷԶՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հայտնի իրողություն է հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային դարավոր արժեքները պահպանելու և սերունդներին փոխանցելու գործում ս. Էջմիածնի Մայր Աթոռին կից հիմնարկությունների՝ տպարանի, ձեռնարանի, թանգարանի, մատենադարանի խոշոր դերը: Դրանց նոր շունչ և ոգի հաղորդվեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հենց սկզբից: Այդ առումով նշանակալի էր Էջմիածնի գիտական ինստիտուտի հիմնադրումը:

Ստորև ընթերցող լայն հանրության ուշադրության ենք ներկայացնում գիտական այդ կենտրոնի հիմնադրման և գործունեության մասին նշանավոր բանասեր, պատմաբան, բառարանագիր, ինստիտուտի գիտական քարտուղար Երվանդ Տեր-Մինասյանի 1922 թ. հունիսի 6-ին գրած ուշագրավ հաղորդումը (տպագրվել է «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» գիրք Ա. և Բ.-ում, Էջմիածին, 1921-1922, էջ 320-327): Նյութը հրապարակում ենք կրճատումներով:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

«Պատմաբանասիրական համդես»-ի

գլխավոր խմբագիր,

բանասիրական գիտությունների դոկտոր

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԷԶՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

(5 փետրուարի 1921 – 1 յունիսի 1922)

Էջմիածնի Գիտական Ինստիտուտի ծագման և հաստատության համառոտ պատմությունը հետևյալն է.

Երբ Յ. Ա. Խ. Յ. Յեղկոմի 1920 ղեկտեմբերի 17-ի ղեկրե-տով պետականացման ենթարկուեցին «բոլոր ազգութեանց կուլտուր-կրթական հիմնարկությունները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գույքով» և փոխանցուեցին «Լուսաւորութեան ժողովրդական Կոմիսարիատի տնօրէնութեան», բնականաբար խնդիր առաջ եկաւ, թէ ի՞նչպէս պէտք է վարուել Էջմիածնի հաստատութիւնների հետ և նույն թուի ղեկտեմբերի 17-ին ղեկրետին կից լոյս տեսաւ նաև Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի հրամանը «Չոգևոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին»: Այդ հրամանի երկրորդ յօդուածի ծանօթութիւնն ասում էր. «Էջմիածնի վանական ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանն ու տպարանը՝ որպէս ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հիմնարկութիւններ Հայաստանի աշխատաւոր ժողովուրդների սեփականութիւն դառնալով, ենթարկուում են անմիջապէս Լուսաւորութեան ժողովրդական Կոմիսարիատին և վերակազմուում վերջինիս կողմից նշանակուելիք կոմիսարի ղեկավարութեամբ»:

Այսպիսով Լուսժողկոմի վրայ պարտականութիւն էր դրուում Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների վերակազմութեան ծրագիրը մշակել և իրականացնել այն կեանքում, և Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանը իրեն յանձնարարուած խնդիրը լուծում է այն մտքով, որ Յ. Ա. Խ. Յ. համար անհրաժեշտ է ունենալ մի գիտական հաստատութիւն, մի «Կուլտուր-պատմական Ինստիտուտ» Էջմիածնում, որ ամփոփուած են գիտական և գեղարուեստական նշանակութիւն ունեցող բազմաթիւ յիշատակարաններ:

Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի այս մտադրութիւնը հաւանութիւն է գտնում Յ. Ա. Խ. Յ. Յեղկոմում և 1921 թ. փետրուարի 5-ին հրատարակուում է ղեկրետ Էջմիածնում Կուլտուր-պատմական Ինստիտուտ հիմնելու մասին:

Այդ ղեկրետն ասում է.

1. «Պետականացուում են և Լուսաւորութեան ժողովրդական Կոմիսարիատի անմիջական իրաւասութեան տակ դրուում Հռիփսիմէի վանքը, Զուարթնոց եկեղեցու աւերակները յարակից շինութիւններով և գոյքերով, Էջմիածնի նոր Վեհարան կոչուած շինութիւնը, վանական հիւրանոցը և վանական նոր հանրակացարանը իր կահաւորութեամբ»:

3. «Յանձնարարուում է Լուս. ժող. Կոմիսարիատին վերակազմել Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների պետականացրած ցանցը (մատենադարան, թանգարան, տպարան և այլն) և հիմնել Էջմիածնում Կուլտուր-պատմական Ինստիտուտ, որ նպատակ պիտի ունենայ գիտական հիմքերի վրայ դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրութեան գործը և միաժամանակ մասսաների սեփականութիւն դարձնել հնութեանց այն բոլոր յիշատակարանները, որոնք գիտական և գեղարուեստական նշանակութիւն ունեն և կարող են աղբիւր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործութեան»:

Դեկրետի երկրորդ յօդուածը վերաբերում է հանրապետութեան որբանոցների մի մասը Էջմիածնում կենտրոնացնելուն և շէնքերի, գոյքերի և հաստատութիւնների մի մասը այդ նպատակին յատկացնելուն:

Այս ղեկրետով հիմք է դրուում «Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտի», որի իրաւասութեանն են յանձնուում մատենադարանը, թանգարանը, տպարանը, վանական հանրակացարանը, Հռիփսիմէի վանքը և Զուարթնոց աւե-

րակները, իսկ ղեկրետում յիշատակուած միւս հաստատութիւնները դրուում են Սոցիալական Ապահովութեան ժողովրդական Կոմիսարիատի տրամադրութեան ներքոյ՝ որբանոցների համար:

«Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտին առաջին կազմակերպչական նիստում (1921 թ. փետրուարի» 2-ին) Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանն յայտարարում է Ինստիտուտը բացուած և հաղորդում, որ նրա գիտական կոլեգիայի անդամ են նշանակուած ընկ. ընկ. Լեւոն Սարգսեան, Երուանդ Տեր-Մինասեան, Սենեքերիմ Տեր-Յակոբեան (միաժամանակ նաև մատենադարանի վարիչ) և Լեւոն Լիսիցեան (միաժամանակ նաև թանգարանի վարիչ. մինչև 1921 թ. փետրուարի 1-ը նա Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների կոմիսար էր): Ընկ. Լուսժողկոմի առաջարկութեամբ Լ. Սարգսեան ընտրուում է Նախագահ, իսկ Ե. Տեր-Մինասեան Գիտական Քարտուղար: Լ. Սարգսեան նշանակուում է նաև Ինստիտուտի կոմիսար և ժամանակաւոր վարիչ: Այդ իսկ առաջին ժողովում ընկ. Լուսժողկոմը յանձնարարում է գիտական կոլեգիային շտապ կարգով կազմել Ինստիտուտի կանոնադրութեան նախագիծը և ներկայացնել իրեն ի հաստատութիւն:


Մինչդեռ Ինստիտուտի Գիտական կոլեգիան զբաղուած էր կազմակերպչական աշխատանքով, կազմում էր իր կանոնադրութիւնը, որի նախագիծը պատրաստել յանձնարարել էր գիտական քարտուղար Ե. Տեր-Մինասեանին, և միջոցներ էր ձեռք առնում կարգաւորելու և ցուցակագրելու արխիւի, մանուկի և ձեռագիրների բաժինները, որոնց համար նոր աշխատակիցներ էին հրաւիրում ընկ. ընկ. Արշակ Բարխուդարեան, Թադէոս Աւդալբեգեան և Մեսրոպ Եպիսկոպոս, եկաւ փետրուարի 17-ի յեղաշրջումը և խանգարեց Ինստիտուտում սկսուած կանոնաւոր աշխատանքը և Ինստիտուտի մատենադարանը և աշխատանքի սենեակները կնքուեցին «Հայրենիքի Փրկութեան կոմիտէի» Վաղարշապատի մասնաճիւղի կարգադրութեամբ:

Թեև կենտրոնի (Երևանի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի) կարգադրութեամբ որոշուեց պահել Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտը, կառավարութեան ներկայացուցիչ նշանակուեց Ն. Աղբալեանը և կնիքները քանդուեցին, սակայն որևէ աշխատանք սկսել անհնար էր, որովհետև Ինստիտուտի գիտական կոլեգիան քայքայուած էր. փետրուարի 18-ի լոյս 19-ի գիշերը բանտից հանուած և սպանուած էր Լ. Լիսիցեանը. կոմիսար և վարիչ Լ. Սարգսեանը ստիպուած էր հեռանալ Էջմիածնից և գտնուում էր Երևանում. Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կարգադրութեամբ պաշտօնից ժամանակաւորապէս հեռացրած յայտարարուեց նաև գիտական քարտուղար Երուանդ Տեր-Մինասեան, այնպէս որ Ինստիտուտում փաստօրէն մնացել էր միայն մատենադարանի վարիչ Սեն. Տեր-Յակոբեան:

1921 թ. ապրիլի սկզբին Յ. Ա. Խ. Յ. կառավարութեան վերականգնմամբ վերահաստատուեց նաև Ինստիտուտի իրաւասութիւնը իւր օրինական սահմաններում, սակայն բաւական ժամանակ անցաւ, մինչև որ կրկին կազմակերպուեց գիտական կոլեգիան և հնարաւորութիւն ստացաւ գործի ձեռնարկելու: Ինստիտուտի կոմիսար և ժամանակաւոր վարիչ Լ. Սարգսեան ապրիլի 25-ից համարուեց պաշտօնից հեռացած և նրա փոխարէն կոմիսար և գիտական կոլեգիայի նախագահ նշանակուեց 1921 թ. մայիսի 1-ից Կարապետ Մելիք-Օհանջանեան, որ միայն մայիսի երկրորդ կէսին սկսեց իւր պաշտօնավարութիւնը. իսկ մինչև այն՝ ժամանակ կոմիսարի և վարիչի պարտականութիւնները կատարում էր Սեն. Տեր-Յակոբեան: Նոյն մայիսի 1-ից կոլեգիայի անդամ և թանգարանի վարիչ նշանակուեց Գարեգին Յովսէփեան Եպիսկոպոսը և մայիսի 10-ից կոլեգիայի անդամ և տպարանի վարիչ՝ Խաչիկ Սամուէլեանը:

Գիտական կոլեգիայի նոր կազմը իր առաջին նիստն ունեցաւ 1921 թ. մայիսի 25-ին և զբաղուեց գլխաւորապէս հաստատութիւնների դրութեան և գործերի հետ ծանօթանալով և իրաւասութեանց խնդիրներով: Այդ նոյն ժողովում որոշուեց արխիւը կարգաւորելու և ցուցակագրելու համար աշխատակից հրաւիրել Գիւտ ծ. վրդ. Տեր-Ղազարեանին:

1921 թ. մայիսի 26-ին Լուսժողկոմ ընկ. Ա. Յովհաննիսեանը Էջմիածին ժամանելով յատուկ ժողով է հրաւիրում և առաջարկ մտցնում վերակազմել «Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտը» այն մտքով, որ նա իւր հետազօտութիւնների նիւթ պէտք է դարձնի Հայաստանի ուսումնասիրութիւնը իւր բոլոր կողմերով՝ աշխարհագրական, երկրաբանական, օդերեւութաբանական և այլն, հողի յատկութիւնը, ջրաբաշխական պայմանները, տնտեսութեան զօնաները և այլն, և այլն, մի խօսքով՝ այն ամբողջ միջավայրը, ուր զարգանում է կուլտուրան և որի վրայ պէտք է հիմնուի նոր ժողովրդական տնտեսութիւնը: Այդ նպատակն իրագործելու համար Ինստիտուտը ունենալու է բացի Կուլտուր-պատմական բաժնից նաև Բնագիտական բաժին, որի կազմակերպութեան մասին անհրաժեշտ է հոգ տանել ըստ կարելոյն շուտով: Որոշուում է առաջարկն ընդունել և Ինստիտուտի կա-



1911 թ. կառուցված Էջմիածնի մատենադարանը (Ճարտարապետ՝ Պ. Չոհրաբեյան):

նոնադրութիւնը կազմել՝ ի նկատի ունենալով երկու բաժինները ևս: Այդ օրուանից որոշուում է նաև «Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտը» վերակոչել «Էջմիածնի Գիտական Ինստիտուտ»:

Այնուհետև Ինստիտուտի գիտական կոլեգիայի ամենագլխաւոր հոգսերից մէկն է դառնում պատշաճ կանոնադրութիւն կազմելը: Մի շարք ժողովներում յունիս և յուլիս ամիսների ընթացքում մանրամասն քննութեան է ենթարկուում գիտական քարտուղարի կազմած կանոնադրութեան նախագիծը, որը և որոշ փոփոխութիւններով ու լրացումներով ընդունուելով՝ առաջարկուում է ընկ. Լուսժողկոմին ի հաստատութիւն 1921 թուի սեպտեմբերին:

Յիշուած կանոնադրութիւնը նախատեսում էր Ինստիտուտի համար երեք տեսակ աշխատանք. նախ՝ գիտական հրատարակութիւններ՝ «Բնագիրներ և Հետազօտութիւններ» ընդհանուր վերնագրի ներքոյ. երկրորդ՝ Ինստիտուտի անդամների և աշխատակիցների մանր երկասիրութիւնների և յօդուածների հրատարակութիւն՝ Էջմիածնի Գիտական Ինստիտուտի Բանբերե պարբերական հանդէսի մէջ և երրորդ՝ գիտական զեկուցումների կազմակերպութիւն, որի նպատակը պէտք է լինէր մի կողմից ընկերների տեղեակ պահել իւրաքանչիւրի աշխատանքների ընթացքին և միւս կողմից նոր մղումներ տալ և մղումներ ընդունել փոխադարձաբար գիտական աշխատանքի ասպարիզում:

Էջմիածնի Գիտական Ինստիտուտի կոլեգիան ամեն ջանք գործ դրեց, որ կարողանայ գոնէ փոքր չափերով իրականացնել այդ աշխատանքները կեանքի մէջ: Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ էր, որ նա իր աշխատակիցների կազմը զօրեղացնէր: Դեռ 1921 թ. մայիսի 26-ին ընկ. Լուսժողկոմը յայտնել էր Ինստիտուտին, որ իր կողմից գիտական աշխատակիցներ են հրաւիրուած Առաքել Բաբախանեան (Լեօ) և Հր. Աճառեան: 1921 թ. յուլիսի 6-ին գիտական աշխատակից է ընտրուում և Լուսժողկոմի կողմից հաստատուում Դ. Անանուն, սեպտեմբերի 19-ին՝ Թ. Թօրամանեան և հոկտեմբերի 4-ին՝ Գրիգոր Չուբարեան: Ահա այս կազմով Ինստիտուտի գիտական կոլեգիան սկսում է իւր աշխատանքը, և նրա այդ ուղղութեամբ կատարած գործն այսօր հրապարակի վրայ է: ...

... Ինստիտուտի Կոմիսար և կոլեգիայի Նախագահ Կ. Մելիք-Օհանջանեանը 1921 թ. օգոստոսի 15-ին արձակուրդով հեռացել է Էջմիածնից, և նրան փոխարինել է իբրև ժամանակաւոր կոմիսար մի ամսով ընկ. Գագիկ Պարզեանը, իսկ իբրև կոլեգիայի ժամանակաւոր Նախագահ մինչև ընկ. Մելիք-Օհանջանեանի վերադարձը՝ Խաչիկ Սամուէլեան: Ընկ. Կ. Մելիք-Օհանջանեանը վերադարձել է իր պաշտօնին նոյեմբերի կեսերին, բայց պաշտօնավարել է կարճ ժամանակ, մինչև 1921 թ. դեկտեմբերի 22-ը: Այդ թուին նա հրաժարուել է պաշտօնից և հեռացել Էջմիածնից, իսկ ժամանակաւոր նախագահի պարտականութիւնը կրկին ստանձնել է Խ. Սամուէլեան մինչև 1922 թ. յունուարի 5-ը: 1922 թ. յունուարի 6-ից Լուսժողկոմ ընկ. Պ. Մակինցեանի հրամանով Ինստիտուտի Փոխ-նախագահ է կարգուել ընկ. Սեն. Տեր-Յակոբեան, որ և այդ պաշտօնը վարում է մինչև այսօր:

Ինստիտուտի Գիտական կոլեգիան մինչև այժմ ունեցել է 32 նիստ, որոնցից առաջին անդրանիկ նիստը նախկին Լուսժողկոմ ընկ. Աշոտ Յովհաննիսեանի նախագահութեամբ, 2 նիստ Լեւոն Սարգսեանի, 1 նիստ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ներկայացուցիչ Ն. Աղբալեանի, 11 նիստ Կ. Մելիք-Օհանջանեանի, 8 նիստ Խ. Սամուէլեանի և 9 նիստ Սեն. Տեր-Յակոբեանի նախագահութեամբ: ...

Գիտական Քարտուղար՝ Ե. Տեր-Մինասեան

6 յունիս 1922 թ., Էջմիածին

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼԻԱՆ
VERJINÉ SVAZLIAN

ԱՄԵՐԻԿԱՆԱՅԻՆ
ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ
ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈՒՆՎՈՒՅԹՈՒՄ
THE ORAL TRADITION OF THE
ARMENIAN-AMERICANS IN THE
COURSE OF TIME

ԳԻՐԻՔ, ՈՐ ՇԱՏԵՐԸ ՊԵՏԻ Է ԿԱՐԴԱՆ

Գիտական մեծարժեք նոր ու սովորա-
ծավալ գիրք է հրատարակել բանագի-
տության դոկտոր Վերժինե Սվազլյանը:
Հավանաբար նախախնամությունը նրան
մանուկ հասակից նախապատրաստել էր
1915 թվականի հայոց ցեղասպանության
վերապրածների և նրանց սերունդների հի-
շողության մեջ պահպանված ազգային ա-
ղետների, նաև ազգային ձեռքբերումների
ու թանկագին հուշերը մարդկությանն ի
պահ տալու համար:

«Ամերիկահայոց բանավոր ավանդույ-
թը ժամանակի հոլովույթում» խորագրով
գիրքը (904 էջ) բացվում է «Հայերի տեղա-
բաշխումը Ամերիկայի Միացյալ Նա-
հանգներում» քարտեզով (քարտեզը կազմել
է Հ.Գ.Սարգսյանը): Հատորն ավարտվում է
«Ամերիկահայոց շրջանում տարածված ժո-
ղովրդական կատարումներ» ծայերիզով:

Գիրքը երկլեզու է՝ հայերեն ու անգլե-
րեն: Դրանում, բացի գիտական գրակա-
նության համար պարտադիր ու բազմատե-
սակ ցանկերից, կան նաև բանասացների
լուսանկարները (էջ 836-850): Լուսանկար-
ները՝ հայերեն ու անգլերեն, ներքևում ծա-
նուցում են լուսանկարի տիրոջ անուն-ազ-
գանունը, ծննդյան թվականը, ապրելու
բնակավայրը:

Գրքի խմբագիրն է եղել երջանկահիշա-
տակ բանագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Սարգիս Հարությունյանը, որը «Խմբագրի
կողմից» խոսքն ավարտում է հետևյալ եզ-
րահանգումով. «Սույն գիտական աշխա-
տությունը մինչև օրս հայ բանագիտության
պատմության մեջ առաջինն է, որ մվիրված
է հայ սփյուռքի մեծագույն համայնքներից
մեկի՝ ամերիկահայոց բանավոր ավանդույ-
թի գիտական համակողմանի ուսումնասի-
րությանը, որն իր պատմաճանաչողական
արժեքով հայ ժողովրդի արդի մշակույթի

պատմության մեջ կարևոր և բացառիկ ար-
ժեք է ներկայացնում»:

Գրքի առաջին բաժինը՝ «Պատմագի-
տական ուսումնասիրություն», ունի չորս
ենթաբաժին:

Երկրորդ բաժինը բաղկացած է
սկզբնաղբյուրներից՝ վկայություններով ցե-
ղասպանության ակամատեսների ու
նրանց ժառանգների, նաև բանահյուսա-
կան ժանրերի առանձին տեսակների նյու-
թերի բաժանումով՝ հեքիաթներ, առակներ,
կենդանական գրույցներ, բարոյախրատա-
կան գրույցներ, պատմական գրույցներ,
կենցաղային գրույցներ, հայերը գաղթաշ-
խարհում, հայերն Ամերիկայում, հայրենա-
դարձներ, զավեշտական գրույցներ, նորե-
կողները խորհրդային հայրենիքում, հա-
յաստանցիներն Ամերիկայում, ամերիկա-
հայոց պատմական երգեր, որոնք Հայոց
Ցեղասպանությունն են (1915-1923թթ.)
ներկայացնում: Նաև որքի ու որբանոցի,
հայրենագրվումի, պանդխտության, հայրե-

նադարձության, մանկության, սիրո և ըն-
տանիքի, կենցաղի, խնջույքի, ազգահա-
վաքի ու հայրենասիրական երգեր:

Խիստ ուշագրավ է ամերիկահայերի ի-
մաստախոսությունների բաժինը, որում
կան առած-ասացվածքներ, իմաստուն
մտքեր, հանելուկներ և նման դրսևորում-
ներ: Գրքում տեղ են գտել ամերիկահայե-
րի տոները ներկայացնող բաժինը, նաև եր-
գերի նոտագրությունը:

Ըստ ամերիկահայոց վկայությունների
է շարադրված «Հայերն Ամերիկայի Միաց-
յալ Նահանգներում» բաժինը, որը փաս-
տավավերական հիմքով է ստեղծված ու
տեղեկատվական յուրօրինակ հանրագի-
տարան է: Դրանից իմանում ենք, որ ա-
ռաջին հայը, որը ոտք է դրել ներկայիս
ԱՄՆ-ի հողի վրա, եղել է Ջոն Մարտին հա-
յը՝ 1618-ին: Հետո՝ 1653-ին, երկու հայ վար-
պետներ Վիրջինիայի գաղութի ղեկավարի
հրավերով եկել են Ամերիկա՝ շերամաբու-
ծությունն ու մետաքսագործությունը զար-
գացնելու նպատակով:

XIX դարի 30-ական թվականներին հա-
յերը Կիլիկիայից ու Անատոլիայից Ամերի-
կա են մեկնել կաթոլիկ միսիոներների գոր-
ծունեության հետևանքով: Հետագայում
հայկական տարրը սովորաբար է համիդ-
յան ջարդերի ու հատկապես Հայոց Մեծ
ցեղասպանության պատճառով: Այդ հայե-
րը կրթվել են ու Միացյալ Նահանգներում
դարձել հայտնի դեմքեր: Դրանցից մեկն է
«քիմիկոս-գյուտարար Քրիստափոր Տեր-
Սերոբյանը, որի հնարած կամաչ և սև ներ-
կերի բաղադրությունը մինչև օրս անհնար
է դարձնում ամերիկյան դուլարի նենգումը»
(էջ 13):

Սվազլյանը ներկայացնում է ԱՄՆ-ում
բացված առաջին հայ եկեղեցիների ու
դպրոցների համառոտ պատմությունը:

Դրանց զուգահեռ շարադրվում է հայկա-
կան միությունների կազմավորումը այդ
երկրում: Չափազանց հետաքրքիր են ամե-
րիկահայեր Բարբարա Չուգասզյանի ու
Հարութ Սասունյանի ինքնակենսագրա-
կան հուշապատումները:

Բազմաթիվ են Սվազլյանի գրառած ցե-
ղասպանությունը վերապրածների վկա-
յությունները ու իրենց հայությունը պահ-
պանած անհատների հարցազրույցները:

Հիմա մեր հայրենիքի այս ծանր օրե-
րին՝ Շուշիի ու Հադրութի կորստից հետո,
լսում ենք, որ թուրքական «գորշ գայլեր»
կոչված, բռնություններ կատարող զինվո-
րականները հայտնվել են Շուշիում:

Սվազլյանի գրքում կա «Թուրքերում
ծագումը՝ գորշ գայլը» գրույցը: Նրանում
ասվում է, թե թուրքերը մոնղոլական ծա-
զում ունեն և եկել են Չինաստանի կողմե-
րից: Այդ քոչվորները մի օր գորշ գայլ են
տեսնում ու իրենց ձիերի վրա նստած՝
հետևում են նրան: Գորշ գայլը գալիս է Հա-
յաստան, իրենք էլ նրա հետևից գալիս են
Հայաստան: Տեսնում են՝ լավ երկիր է,
մտածում են մնալ այդտեղ և հաստատվում
են Հայաստանում: Դրանից հետո իրենց
խորհրդանիշը դարձնում են Գորշ գայլը:
Թուրքերը սկսում են ճնշել հայերին, ծանր
հարկեր են դնում նրանց վրա, սպանում են,
այրում տները: Հետո սկսում են փախցնել
մինչև տասը տարեկան քրիստոնյա տղա-
ներին, թլպատում են, իսլամացնում, փո-
խում նրանց լեզուն ու դարձնում ենիջերի:

Բանահյուսական որոշ միավորներ,
ըստ երևույթի, հայկական միջավայրում
թափառող սյուժեներ են: Ինչպես, օրինակ,
«Թագավորն ու աղքատը», որը կա հեքիա-
թի ձևով տարբեր նահանգներից գրառված
հյուսվածքներում: Աղքատը կարողանում է
այնպիսի սուտ ասել, որ թագավորը աղքա-
տի բերած տուրակը լցնում է ոսկով (էջ 446):

«Պատմական գրույցներ» բաժնում հե-
տաքրքիր պատումներ կան խրիմյան Հայ-
րիկի, Անդրամիկ Ջորավարի, Սողոմոն
Թեկիրյանի, Վիլյամ Սարոյանի, Նիկոլ Աղ-
բալյանի, Գարեգին Նժդեհի, Վազգեն Ա կա-
թողիկոսի, Սոնթե Մելքոնյանի և մի քանի
այլ նշանավոր հայերի մասին:

«Անգլիագիր հայ գրող Վիլյամ Սարոյա-
նը» գրույցում կարևոր փաստեր են հա-
ղորդվում աշխարհահռչակ հայ գրողի մա-
սին: Սարոյանի «Մարդկային կատակեր-
գություն» (1942թ.) գրքի հիման վրա նկա-
րահանված ֆիլմի սցենարի համար Սարո-
յանն արժանացել է «Օսկար մրցանակի»:
Բերվում է նաև Սարոյանի հետևյալ հայտ-
նի ինքնագրահատկանը. «Թեև գրում են
անգլերեն և ծնունդով ամերիկացի են,
բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Լե-
զուն, որով գրում եմ՝ անգլերենն է, միջա-
վայրը, որ նկարագրում եմ՝ ամերիկյան է,
իսկ ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկա-
կան է: Ուրեմն, ես հայ գրող եմ...» (էջ 473):

Հայերը գիտեն, որ իրենք դարերի ըն-
թացքում աշխարհին տվել են հանճարներ:
Եվ սնապարծ հայերի մի տեսակ, որն ա-
ռանձնապես բարձր կրթական մակարդակ
չունի, սիրում է աշխարհի շատ նշանավոր
մարդկանց հայացքներ: Գրքում զավեշտա-

լի մի շարք նմանօրինակ մանրապատում-
ներ կան: Դրանցից մեկը կոչվում է «Ջորջ
Վաշինգտոնը և հայ տղաները»...: 1776-ին
Ամերիկայի անկախության համար մղված
կռիվներում ժամանակ, երկու խարբերոցի
հայ տղաներ իրենց զինվորական պահա-
կապետին մեջ, գիշերվա ցուրտեն սառե-
լով, մեկը մյուսին կրես:

-Սարգիս եղբայր, ինչ հիմար էինք, որ
ծգեցինք մեր գեղեցիկ խարբերոցը և եկանք
հոս, որ ցուրտեն մեռնինք:

Այդ պահում Անգլիո դեմ ապստամբող
ամերիկյան զաղութներու զինված ուժերու
հրամանատար Ջորջ Վաշինգտոնը, որ
ծիու վրա նստած կշռջեր, կլսե ադ խոսքե-
րը և կըսե:

-Տղաներ, դո՞ւք էլ հայ եք (էջ 508):
Բավականին մեծ թիվ են կազմում
հրեաների՝ ֆրանսիացիների, ռուսների և
հատկապես հայերի համեմատական բնու-
թագրերը պարունակող զավեշտալի
գրույցները: Դրանցից մեկն է՝ «Հրեաները
և հայերը». «Դժոխքին մեջ հրեաներուն և
հայերուն կմտցնեն եռացող ջրով լիջը
կաթսայի մը մեջը: Հրեաները իրար ուս-ու-
սի բարձրանալով՝ դուրս կուգան կաթսա-
յի մեջն» կազատվին: Հայուն մեկը, երբ
կփորձե դուրս գալ, անոր ոտքերեն կքա-
շեն, վար կբերեն, որ իրարու հետ խաշվին»
(էջ 515):

Չավեշտալի մանրապատումներ կան՝
կապված Ստալինի, Ռուզվելտի, Լենինի,
Չերչիլի, Խրուշչովի և Ջոն Քենեդու հետ:
«Խրուշչովին քննադատող մարդը» զավեշ-
տուն կարդում ենք. «Մարդուն մեկը Կրեմլ
է գնացել, սկսել է պոռալ. «Խրուշչովը ա-
պուշ է, Խրուշչովը էշ է»: Անոր կտանին
բանտ կոնեն, երկու տարի կուտան՝ Խրուշ-
չովի դեմ խոսելու և տասը տարի՝ պետա-
կան գաղտնիքը մեջտեղ հանելու համար»
(էջ 519):

Չավեշտալի գրույցներ կան կապված
Քլինտոնի, Էլջինի, Լևոն Տեր-Պետրոսյանի,
Բեն Լադենի, Բուշ Կրտսերի, Ջորջ Բուշի և
Էրդողանի, Օբամայի հետ:

Բանահյուսական խաղիկների, օրորո-
ցային երգերի հետ կան ազգահավաքի ու
հայրենաբաղձության պարզ, սակայն
սրտանց ասված երգեր:

Հարուստ է առած-ասացվածքների բա-
ժինը, որում դարավոր փորձի հիման վրա
ստեղծված իմաստախոսություններ են, ո-
րոնք վերածանալիա են:

Վերժինե Սվազլյանի «Ամերիկահայոց
բանավոր ավանդույթը ժամանակի հոլո-
վություն» գիրքն ունի ուսուցողական խոր
իմաստ: Այն մտահղացվել և արարվել է 40
տարի տևած ստեղծագործական աշխա-
տանքի շնորհիվ, երբ հեղինակը 1979,
1990, 2001, 2004, 2008 թվականներին այ-
ցելել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ,
եղել է տարբեր քաղաքներում, հանդիպել
ամենատարբեր զբաղմունքի ու տարիքի
հայերի հետ և փշուր առ փշուր հավաքել
ամերիկահայերի բանավոր ստեղծագոր-
ծության հյուսվածքները՝ դրանք դարձնե-
լով ընդհանուրի սեփականությունը և ա-
վանդելով ապագա սերունդների:

Անելիսա ԴՈՒՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Էմիլ Օրդուխանյանը

Ս.թ. մարտի 30-ին ՀՀ
գիտությունների ազգային ակա-
դեմիայի նախագահության նիս-
տում ՀՀ ԳԱԱ փիլիսոփայույթ-
յան, սոցիոլոգիայի և իրավուն-
քի ինստիտուտի տնօրենի պաշ-
տոնում ընտրվեց քաղաքական
գիտությունների թեկնածու, դո-
ցենտ Էմիլ Օրդուխանյանը:

Էմիլ Օրդուխանյանի թեկնա-
ծությունն առաջադրվել է ՀՀ
ԳԱԱ հայագիտության և հասա-
րակական գիտությունների բա-
ժանումների բյուրոյի կողմից: ՀՀ
ԳԱԱ փիլիսոփայության, սոցիո-
լոգիայի և իրավունքի ինստի-



տուտի գիտական անձնակազմի
կողմից առաջադրվել է ինստի-
տուտի տնօրենի ժամանակա-

վոր պաշտոնակատար Անահիտ
Ջիջյանի թեկնածությունը: ՀՀ
ԳԱԱ նախագահության 14 ան-
դամների փակ զաղումի քվեար-
կությամբ ընտրվեց Էմիլ Օրդու-
խանյանը՝ 9 կողմ, 3 դեմ ձայնե-
րով: Անահիտ Ջիջյանը ստա-
ցավ 3 կողմ, 9 դեմ ձայն: 2
քվեաթերթիկ անվավեր էր:

Էմիլ Օրդուխանյանը ծնվել է
1985 թ.-ին: 1991-2001 թթ.-ին
սովորել է Ժամկոչյանի անվան
թիվ 119 միջնակարգ դպրոցում:
2001-2006 թթ.-ին սովորել է Վա-
լերի Բրյուսովի անվան պետա-
կան լեզվաբանական համալ-

սարանում, ստացել քաղաքա-
գետի, ֆրանսերենի մասնագե-
տի որակավորում, 2006-2009
թթ.-ին նույն համալսարանում
շարունակել է ասպիրանտու-
րան՝ ռոմանական լեզուներ
մասնագիտությամբ: Ձուգահեռ
եղել է հայցորդ ՀՀ ԳԱԱ փիլիսո-
փայության, սոցիոլոգիայի և ի-
րավունքի ինստիտուտում:

2007-2018 թթ.-ին դասախո-
սել է Վալերի Բրյուսովի անվան
համալսարանի ֆրանսերենի
ամբիոնում, 2009-2016 թթ.-ին՝
Հայկական պետական մանկա-
վարժական համալսարանի քա-
ղաքագիտության և իրավունքի
պատմության, սոցիոլոգիայի և
սոցիալական աշխատանքի ամ-

բիոններում, 2013 թ.-ից մինչ
օրս՝ Մխիթարյան միաբանութ-
յան կրթահամալիրում՝ որպես
հասարակագիտության դասա-
խոս և ՀՀ ԳԱԱ գիտակրթական
միջազգային կենտրոնում՝ որ-
պես քաղաքագիտության, քա-
ղաքական կառավարման, մի-
ջազգային հարաբերություննե-
րի ամբիոնների դասախոս:
2020-2021 թթ.-ին դասախոսել է
Շիրակի պետական համալսա-
րանի Քաղաքական գիտության
տեսության և պատմության ամ-
բիոնում, 2014 թ.-ից մինչ
օրս՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու ➤8

...ընտրվեց Էմիլ Օրդուխանյանը

➤ Իրավունքների, ժողովրդավարության և քաղաքագիտության ամբիոնում: 2009-2014 թթ.-ին եղել է ՀՀ ԳԱԱ փոխտնօրենի, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքական հետազոտությունների բաժնի ավագ գիտաշխատող, իսկ 2009 թ.-ից մինչ օրս ինստիտուտի գիտական քարտուղարն է:

Էմիլ Օրդուխանյանը 8 մեմագրության, որից 6-ը՝ համահեղինակությամբ, 2 ուսումնամեթոդական ձեռնարկի, որից 1-ը՝ համահեղինակությամբ, և ավելի քան 40 ակադեմիական հոդվածների հեղինակ է:

Էմիլ Օրդուխանյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ փոխտնօրենի, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի զարգացման ծրագիրը, որը ներառում է կարիքների գնահատում և կարողությունների զարգացում, կառուցվածքային փոփոխություններ՝ հիմնարար գիտական ուղղություններով թեմաների վերանայում և արդիականացում, արդյունավետության գնահատման չափորոշիչներ, առաջատար գիտական նվաճումների հասանելիություն, երիտասարդ գիտաշխատողների առաջխաղացում:

Ինստիտուտի գիտական արդյունքների բարելավման և միջազգայնացման նպատակով Էմիլ Օրդուխանյանը խոստանում է ներդնել աջակցման և խրախուսման մեխանիզմներ՝ միջազգային առաջատար գիտաշխատական շտեմարաններում տպագրությունների համար: Նաև նախատեսվում է արտասահմանում բնակվող ու գործող հայազգի գիտնականների տվյալների շտեմարանի կազմում, հայազգի պրոֆիլային գիտնականների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը նշեց, որ, որպես նորընտիր տնօրեն, Էմիլ Օրդուխանյանը պետք է կառուցողական և թիմային աշխատի ինստիտուտի աշխատակազմի հետ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՀՀ ԳԱԱ Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվել է Ալվարո Անտոնյանը

Ա.թ. մարտի 30-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Ալվարո Անտոնյանը, ով մինչ այդ ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն էր: Նրա

թեկնածությունն առաջադրվել է ՀՀ ԳԱԱ Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի գիտական անձնակազմի կողմից և երաշխավորվել ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովի կողմից:

Ալվարո Անտոնյանը ծնվել է 1964 թ.-ին: 1982-1987թթ.-ին սովորել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի ամբիոնում, 1990 թ.-ից եղել է հայցորդ ՀՀ ԳԱԱ Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում, 1996 թ.-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1987-1990 թթ.-ին աշխատել է ՀՀ ԳԱԱ Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում՝ որպես ավագ լաբորանտ, 1990-1997 թթ.-ին՝ կրտսեր գիտաշխատող, 1997-2008 թթ.-ին՝ ավագ գիտաշխատող, 2021թ.-ից ինստիտուտի առաջատար գիտաշխատող է, 2018 թ.-ից ինստիտուտի «Աղեմիլային միացությունների նյութափոխանակության» լաբորատորիայի վարիչն է: 2021-2022 թթ.-ին զբաղեցրել է ինստիտուտի տնօրենի տեղակալի պաշտոնը: 2007թ.-ից դասավանդում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեղագործական քիմիայի ամբիոնում, 2017 թ.-

ից ամբիոնի դոցենտ է, 43 գիտական հոդվածի և 40 գիտական զեկույցի հեղինակ: Անդամակցում է Նեյրոքիմիկոսների եվրոպական միությանը և Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիային:

Ալվարո Անտոնյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի գիտական ուղղությունները՝ նյարդադեգեներատիվ, աուտոիմուն հիվանդությունների մեխանիզմների հետազոտություններ: Նա նշեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվում երիտասարդ կադրերի պատրաստմանը, հայաստանյան և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ համատեղ հետազոտությունների իրականացմանը: Նրա ներկայացրած զարգացման ծրագրով նախատեսվում է ՀՀ ԳԱԱ Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի բազայի հիման վրա ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ստեղծել կենսաքիմիայի ամբիոն, ստեղծել բջջային կուլտուրաների հետ աշխատելու սենյակներ՝ համալրված մոր սարքավորումներով, բացել ակրեդիտացիայի լաբորատորիա՝ վճարովի փորձաքննություն իրականացնելու համար, հարմարեցնել առկա կենդանանոցի պայմանները in vivo աշխատանքների համար ընդունված ստանդարտներին, ակտիվացնել գիտաժողովների և գիտական դպրոցների անցկացումը, ուսանողների համար ստեղծել բազա կենսաքիմիական և վերլուծության մեթոդների ուսուցման համար, դրամաշնորհների ֆինանսավորմամբ երիտասարդ աշխատակիցներին գործուղել արտասահմանյան գիտական հաստատություններ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը նշեց, որ անհրաժեշտ է հաղթահարել առկա խնդիրներն ու մարտահրավերները և զարգացնել, առաջ տանել ինստիտուտը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է մրցույթ «ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպության» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 21-րդ կետի՝ կազմակերպության տնօրենի թեկնածությունն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները, որոնք կարող են առաջադրել միայն մեկ թեկնածու: Տնօրենի թեկնածուն պետք է ունենա գիտական աստիճան, ընտրության պահին լինի 65 տարեկանից ցածր տարիքի, ունենա գիտակազմակերպչական աշխատանքի փորձ, մասնագիտական ուղղվածությամբ պետք է համապատասխանի գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններին:

Առաջադրված թեկնածուները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Առաջադրումը հաստատող փաստաթուղթ
3. Լուսանկար
4. Ինքնակենսագրություն
5. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն
6. Գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն
7. Գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)
8. Հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ
9. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
10. Տեղեկանք մշտական բնակության վայրից
11. Բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)
12. Կազմակերպության զարգացման ծրագիր
13. Անձնագրի և սոց. քարտի պատճենները

Թեկնածուների հիմնավորված առաջադրումները վերոնշյալ փաստաթղթերի հետ մեկ ամսվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԳԱԱ կադրերի բաժին հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24, հեռ. 52-70-51:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը հայտարարում է ընտրություն օրգանական քիմիայի ինստիտուտի ֆոսֆորօրգանական միացությունների և Մոլեկուլի կառույցի ուսումնասիրման կենտրոնի Օպտիկական սպեկտրոսկոպիայի լաբորատորիաների վարիչների թափուր տեղերի համար

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա գիտական կազմակերպության»

պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 16-րդ կետի՝ թեկնածությունն առաջադրելու իրավունք ունեն համապատասխան բաժանմունքի բյուրոն, Կենտրոնի գիտատեխնիկական խորհուրդը և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները:

Առաջադրված թեկնածուի համար կազմակերպության մասնագիտական ուղղվածությամբ համապատասխան գիտական աստիճանի առկայությունը պարտադիր է:

- Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
1. Դիմում
 2. Լուսանկար
 3. Քաղվածք աշխատանքային գրքույկից
 4. Ինքնակենսագրություն
 5. Բարձրագույն կրթության, գիտական աստիճանի և գիտական կոչման դիպլոմների պատճենները
 6. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
 7. Գիտական աշխատությունների ցուցակ
 8. Բնութագիր աշխատավայրից:
- Թեկնածուի հիմնավորված առաջադրումը վերոնշյալ փաստաթղթերի հետ միասին, 15 օրվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից), խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԳԱԱ ՕԴԶ ԳՏԿ գիտքարտուղարին:

0014, Երևան, Ազատության 26, հեռ. 28-52-91:

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է մրցույթ «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 21-րդ կետի՝ կազմակերպության տնօրենի թեկնածությունն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները, որոնք կարող են առաջադրել միայն մեկ թեկնածու: Տնօրենի թեկնածուն պետք է ունենա գիտական աստիճան, ընտրության պահին լինի 65 տարեկանից ցածր տարիքի, ունենա գիտակազմակերպչական աշխատանքի փորձ, մասնագիտական ուղղվածությամբ պետք է համապատասխանի գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններին:

Առաջադրված թեկնածուները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Առաջադրումը հաստատող փաստաթուղթ
3. Լուսանկար
4. Ինքնակենսագրություն
5. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն
6. Գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն

7. Գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)

8. Հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ

9. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
10. Տեղեկանք մշտական բնակության վայրից
11. Բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)

12. Կազմակերպության զարգացման ծրագիր

13. Անձնագրի և սոց. քարտի պատճենները

Թեկնածուների հիմնավորված առաջադրումները վերոնշյալ փաստաթղթերի հետ մեկ ամսվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԳԱԱ կադրերի բաժին հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24, հեռ. 52-70-51:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի արևմտահայերենի բաժնի գիտաշխատողի թափուր տեղի համար

Դիմողը պետք է ունենա գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ դեկավարելու ունակություն:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում,
 - բ) լուսանկար,
 - գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
 - դ) ինքնակենսագրություն,
 - ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
 - զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,
 - է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
 - ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,
 - թ) հրատարակված աշխատանքների ցանկ,
 - ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),
 - ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:
- Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-53-37:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24թ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 14.04.2022 թ.:

"ГІТУТІОН" ("Hayka") газета НАН РА